№ 189 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 1907 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22 № 189

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարություն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՇԱԿ

քաղաքական եւ գրականական լրագրի

ԱՌԱՋԻԿԱՑ 1908 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(36-րդ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր. մէկ ամսվանը 1 ռուբլի։

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

## ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Ի նպաստ Թիւրքական Հայաստանի տառապեալ հայերի

Վերջին ժամանակներս Թիւրքական Հայաստանի ամէն կողմերում տիրում է սարսափելի կարօտություն, որ առաջ է եկել հունձքի պակասությունից, բնական աղէտներից, ինչպէս են երկրաշարժը, հրդեհը և այլն, և ընդհանրապէս երկրի անտեսական վերին աստիճանի անբնական պայմաններից։

Ամենայն Հայոց հանգուցեալ Կաթողիկոս Խրիմեան Հայրիկը, ի նկատի ունենալով Թիւրքական Հայաստանի հայ ժողովրդի այդ ողբալի դրությունը, միջնորդություն էր յարուցել Նորին Կայսերական Մեծություն Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկովի ժամ, որպէսզի թոյլատրվի ընդհանուր հանգանակություն բանալ ի նպաստ Թիւրքական Հայաստանի մեր սովեալ և բազմակարօտ եղբայրների։ Փոխարքայ կոմս Վօրոնցով-Դաշկով 1907 թ. հոկտ. 17 թուակիր և № 22311 իր գրությամբ յայտնել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ Ներքին և արտաքին գործերի մինիստրների հաւանությամբ արտօնում է հանգանակություն այս նպատակով և հաստատում է հանգուցեալ Կաթողիկոսի կողմից առաջարկված Հանգանակիչ Մասնաժողովը, որ գտնվում է Թիֆլիսում (այս Մասնաժողովը ընտրվեց և հաստատվեց կաթողիկոսական կօնդակով այս տարվայ մայիսին) և բաղկացած է հետևեալ անձերից—պ. պ. Առաքելեան Համբարձումից, Արասխանեան Աւետիքից, Արղությեան իշխանուհի Սօֆիա, Կաֆեան Դաբրիէլ, Զաւէն Տիգրան, Մարտիրոսեան տիկին Հայկանոյշ, Մելիք-Ազարեան Ալէքսանդր, Յարությունեան Սամսոն, Սարուխանեան Առաքել, Ստեփանեան բժիշկ Կարապետ, Վերմիշեան Քրիստափոր և Քալանթար Ալէքսանդր։

Հանգանակիչ Մասնաժողովն ընտրել է իր դիւանը, այն է—Ալէքսանդր Մելիք-Ազարեան՝ նախագահ, Սամսոն Յարությունեան՝ փոխ-նախագահ, Առաքել Սարուխանեան՝ գանձապահ և Համբարձում Առաքելեան՝ քարտուղար։

Հանգանակիչ Մասնաժողովն այժմ, սկսելով իր գործունէությունը, դիմում է հայ հասարակության բոլոր խաւերին և կոչ է անում չը զլանալ իր նպաստները՝ Թիւրքական Հայաստանի բազմաչարի աղէտներից տառապող և կարօտության վերջին ծայրը հասած հայ ժողովրդին։

Մասնաժողովի բոլոր անդամներն ընդունում են իրանց մօտ նուիրաբերություններ։ Օտար քաղաքներից նուէրներ կարելի է ուղարկել Մասնաժողովի գանձապահի անունով, որի հասցէն է՝—Тифлисъ, въ Правленіе общества А. И. Манташевъ и К-., А. Саруханіанъ.

Մտացված նուիրատուությունների և Թիւրքական Հայաստան ուղարկված դրամական նպաստների մասին պարբերաբար հաշիւ կը ներկայացվի հասարակության՝ լրագրության միջոցով։ 1—5

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նշանակված է կիրակի, դեկտեմբերի 23-ին, առաւօտ. ժամը 10-ին, քաղաքային վարկի ընկերության դահլիճում (Պուշկինսկի փող. Թամամշևի քարվանսարայի դիմաց)։

Պարապմունքների առարկաներն են

1) Նախահաշուի քննությունը և հաստատությունը. 2) ընտրեալ անդամների և ընդունող մասնաժողովի անդամների վարձատրության չափը և միջոցը. 3) վարչության երեք անդամի, խորհրդի վեց պատգամաւորների, վերաստուգիչ մասնաժողովի երեք անդամի և վերջիններիս երեք թեկնածուների ընտրությունները։ Խնդրվում է մտնելու ժամանակ ներկայացնել անդամության կվիտանցիաները։

Ծանօր.—Կանոնադրությունը և անդամների ցուցակը կարելի է ստանալ նոտար Նիկոլայևի գրասենեակում։

(առ.) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, դեկտեմբերի 23-ին,
Հայ դերասանների ընկերակցությունը

Ցօգուտ գործակատարների փոխադարձ օգնության ընկերության

Կը ներկայացնէ

→ ԺԱՅՌ ←

Դրամա 4 գործ. Վ. Փափազեանի
Մասնակցում է ամբողջ խումբը
Տեղերի գինը 3 ր. 60 կ.-ից 1 ր.
Տոմսակ վերցնողները ժողովարանի ժուռքի համար առանձին չեն վճարում
Տոմսակները կարելի է ստանալ ժողովարանում, շվեյցարից.
Սկիզբը ժամը 8-ին.

2· կ· 1—2

Սումբաթովի բաղանիքի բաժնետէրերը յայտնում են ի գիտություն, որ 1908 թ. յունվարի 1-ից բաղանիքը տրվում է կապալով. ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել Ա. Մանթաշեանցի գրասենեակը՝ առաւօտեան ժամը 10-ից—2-ը։

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(Կիրօչնայա փողոց)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՍՍԱՐԱՆ.

Կիրակի, դեկտեմբերի 23-ին,

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ռուսերէն լեզուով կը կարդայ դասախօսություն

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Դասախօսության սկիզբն է առաւ. 11½ ժ.
Տոմսակները 10 և 5 կօպ. կը ծախվեն առաւօտեան 10 ժամից։

2· կ· 1—2

ՀՐԱՒԷՐ

Զգրաշէնի ս. Աւետաց եկեղեցու երեցփոխը խնդրում է ծխականներին ներկայ լինել կիրակի, դեկտեմբերի 23-ին, Զգրաշէնի եկեղեցում ժամը 12-ին լինելիք երկրորդ ընդհանուր ծխական ժողովին՝ քննելու եկեղեցու 1906 թուի հաշիւները, 1908 թուի նախահաշիւը և գանձանակը տուրքի վերածելու հարցը։

Երեցփոխ՝ Ալէքսանդր Քալանթարեանց

1—1

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գիտակից մասսաներ. Վերջին տեղեկություններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Առաջին Դումայի դատարանի առաջ. Ոստիկանապետի կարգադրությունը. Դատաստանական դահլիճից. Թատրոն և երաժշտություն. Թիւրքահայի սովեալների օգտին. Նոր-Բայազետի գաւառի սովեալների օգտին. Շուշու թեմական դպրոցի շուրջը. Մի դատն իրողություն. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկություններ. Ռուսաստանի կեանքից. Նամակներ խմբագրության. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Սենկեվիչի նամակը. Դաշնակցությունը միջազգային սօցիալիստական կօնգրէսում. Նամակներ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

### ԳԻՏԱԿԻՑ ՄԱՍՍԱՆԵՐ

II

Երէկվայ մեր յօդուածում մենք արձանագրեցինք, որ քաջության փայլերի ետևում խտացել է մեր իրականության մէջ ստրկության մի սարսափելի խաւար։

Մենք ասացինք, որ ստրկացած ժողովուրդը գործիք և խաղալիք է տեղական ազդեցիկների ձեռքին։

Այսօր այդ ազդեցիկը տանուտէրն է, վաշխառուն և ոստիկանը, վաղը՝ խմբապետը և յեղափոխականը։ Ստրկացած ժողովուրդը գնում է գլխիկոր բոլորի ետևից, համակերպվելով այն բոլորին, ինչ որ սահմանում է նրա համար ազդեցիկը։ Մէկի հետ նա փըչում է յեղափոխական շեփորներ, միւսի հետ կրկնում է ասիական բռնակալության ամենասոսկալի թելադրությունները։ Բոլորը կատարվում է թէ միաժամանակ, թէ մէջ ընդ մէջ, նայած հանգամանքներին։

Եւ մենք ականատես ենք՝ թէ ինչպէս կեղծված ու խեղաթիւրված է հանդէս գալիս մեր առաջ ժողովրդի իսկական շահերի արտայայտությունը։ Ժողովուրդը բռնության և կեղեքման ճնշումների տակ ինքն իրան դաւաճանում է, ինքն իրան ներկայացնում սխալ պատկերով։

Այդ բաւական չէ։ Ստրուկների բազմության մէջ խեղդվում են և այն ոյժերը, որոնք կրում են բողոքի և քննադատության տարրեր իրանց մէջ։

Արդարև, այն բացառիկ անհատները, որոնք հանդէս են գալիս իրանց բողոքով և չեն ցանկանում համակերպվել, շոյել, շողոքորթել և ծծել, ոչ միայն պաշտպանություն չեն գտնում այն մասսայի կողմից, որի շահերի ջատագովներն են հանդիսանում, այլ և յաճախ հէնց նրա ձեռքով էլ հալածվում են։

Այդպիսով ստրուկը քաշում է իր ետևից և այն բոլորը, ինչ որ խանգարում է նրա ստրկական հոգեբանությանը։

Եւ անշուշտ՝ մեր առաջ հանդիսանում է մի ողբերգական տեսարան, թէ ինչպէս ժողովուրդը իր ձեռքով հալածում է նրանց, որոնք նրա հարազատ զաւակներն են, նրա անկեղծ բարեկամները, նրա անկաշառ փաստաբանները։

Ծանր է դրությունը։ Դա ճիշտ է։ Բայց չը պէտք է մի բոպէ անգամ վախենալ այդ ծանրությունից և թուլանալ գործունէությունից։

Չը պէտք է թուլանալ, յիշելով, որ ժողովրդին նուիրված անկաշառ գործունէությունը ինքն իրան կը պաշտպանէ և կամաց-կամաց կը գրաւէ լայն ժողովրդական խաւեր դէպի ինքը։

Որքան էլ դժուար և յոգնեցնող լինի ժողովրդին գիտակից և ինքնուրոյն դարձնելու աշխատանքը, այնուամենայնիւ պէտք է ամենաանձնուէր կերպով յանձն առնել նրան, համոզված լինելով, որ միայն և միայն գիտակից և ինքնուրոյն ժողովուրդը կարող է տէր ու տնօրէն լինել իր գործերի և ազատ լինել հարատահարության և կողմնակի ճնշումների քայքայիչ ազդեցություններից։

Նպաստեցէք, ինչով կարող էք, ժողովրդի գիտակցության խորանալուն և ընդարձակվելուն, ուղղորդեցէք ժողովրդի մօտ կուլտուրական գործողներ, օգնեցէք նրան անկաշառ հրապարակական խօսքով, տուէք նրա ձեռքը գիտության պաշարներ և մի շարք կուլտուրական զէնքեր, որպէսզի ստրկության շղթաները թուլանան և խորտակվեն։

Ա. Քալանթար

### ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երևանի նահանգապետը Կովկասի Փոխարքայի առաջ միջնորդություն է յարուցել, որ պետական գանձարանից տրվի այն 135,004 ռուբլին, որ տեղական նահանգական մատակարարական մասնաժողովը հնարաւոր է գտել յատկացնել՝ Երևանի գաւառի Երաշտից և դաշտային մկներից վնասված 64 գիւղերի բնակիչների սերմացուի և ժատակարարական կարիքներին բաւարարություն տալու համար։ («Ռ.»)

—

Կ. Պոլիս.— Դեկտեմբերի 14-ին և 15-ին Մեկկայում եղաւ խօլերայի 80 դէպք. 50 հոգի մեռան։ Ջիդդայում դեկտ. 14-ին հիւանդանոցում գտնվում էին 29 հիւանդներ, որոնցից 20-ը մեռան։ Քաղաքում դեկտ. 14-ին երեւան հանեցին խօլերայով հիւանդանալու առաջին դէպքը։

Բ. Դուռը ընդունեց Սամսօնի իշխան Գէօրգիադիսի հրաժարականը։ Սուլթանին խնդրած է նոր իշխան հաստատել պետական խորհրդի անդամ Գնօսիս-Էֆէնդուն։

Դեսպանների երէկվայ հանդիսական նստաշրջանում մեծ պետությունների ներկայացուցիչները Բ. Դրան ցուցակցությունն են յայտնում, որ նրանք չեն կարող համաձայնվել Բ. Դրան առաջարկությունների՝ քաղաքացիական գործակալներին թիւրքայ ծառայության մէջ ընդունելու նկատմամբ։ Քաղաքացիական գործակալները և ֆինանսական մասնաժողովը վերին աստիճանի օգտակար ծառայություններ մատուցին բարենորոգումների գործին, և հիմք չը կայ փոփոխություններ մտցնել երկու հաստատությունների գոյության պայմանների մէջ։ Դեսպանները վերստին պնդում են դրականապէս, որ Բ. Դուռը որքան կարելի է շուտով համաձայնություն տայ դեկտ. 2-ի հաւաքական նոտայում զետեղված առաջարկություններին։

Միաժամանակ դեսպանները Բ. Դրան լուրջ ուշադրությունն են հրաւիրում այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է հրահանգներ հրատարակել՝ ֆինանսական մասնաժողովի ընդհատված նիստերը վերսկսելու մասին։ Ընդհատումը, որ արգելք է հանդիսանում գործերի լուծման և խանգարում է գալիք տարվայ նախահաշիւը կազմելուն, լուրջ վնաս կը հասցնէ հաստատության բարեյաջող գործունէության, հաստատության՝ որ մինչև օրս կանոնաւորապէս գոյություն է պահպանել, տալով շատ և շատ օգուտներ ինչպէս ազգաբնակության, այնպէս և Բ. Դրան համար։ Մեծ պետությունները բնաւ մտադիր չեն աղաչել սուլթանի դերադոյն իշխանության։

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴՈՒՄԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

—

Երկրորդ նիստը բացվում է դեկտեմբերի 13-ին, առաւօտեան ժամը 11 և 40 րոպէին։

Սկսվում է վկաների հարցաքննությունը, որից յետոյ խօսք է խնդրում Ի. Ի. Գետրունկէվիչը, որի ճառը տալիս ենք քաղուածքներով։

Ի. Ի. Գետրունկէվիչ.—Երէկ, նախագահի տուած այն հարցին, թէ «մեղաւոր էք ճանաչում ձեզ», ես պատասխանեցի, «ոչ»,—ասում է Գետրունկէվիչը։—Այդպիսի պատասխաններ կը լսէք դուք մեղադրեալներից յաճախ, բայց այդպիսի պատասխան մի դատաստանական գործում, որտեղ մեղադրվում են Գետական Դումայի նախկին անդամները, առանձին խորհրդաւոր արժէք ունի, որովհետև մենք չենք ժխտում դատարանը, մենք ընդունում ենք նրան և եկել ենք լիակատար համոզմունքով, որ, երբ կատարել ենք այս կամ այն յանցանքը, մենք, ինչպէս միւս բոլոր քաղաքացիները, ենթարկվում ենք դատաստանական պատասխանատուության։ Բայց եթէ ես ինձ մեղաւոր չը ճանաչեցի, պատճառը այն էր, որ մեղադրանքի խմբագրության մէջ, կատարված փաստի մէջ կան էլեմենտներ, որոնք, ըստ իս, կարօտ են պատճառաբանության։ Այդ պատճառաբանությունը պահանջվում է, որովհետև դատարանը դրընբաց է։ Ամբողջ երկիրը հետևում է այդ դատավարության։ Նա իրաւունք ունի իմանալու՝ թէ ինչ է կատարվում և ինչի մէջ են մեղադրվում նրա նախկին ներկայացուցիչները։

«Անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ մեղադրանքը ձևակերպված է բոլորովին հակառակ կերպով, և այն, ինչ որ մէջոց էր միայն, դարձել է նպատակ։ Դուրս է գալիս, որ հայրենիքի ծառայությանը նուիրված մարդկանց միակ նպատակն էր ազգարնակությանը զրդել չը հնազանդվելու օրէնքին։ Այդպիսի նպատակ չէ եղել և չէր էլ կարող լինել»։

Ապա ճառախօսը բացատրում է, որ այդ բոլորը առաջացել է նրանից, որ իշխանությունը, նպատակ դնելով վերջ տալ ազատագրական շարժմանը, այնքան է դիւրացրել մեղադրանքը, որ դարձել է ալգեբրայական մի թէօրիա։

«Ես կարծում եմ, պարոն դատաւորներ,—ասում է ճառախօսը,—որ վերբերգեան կոչը եղակի երևոյթ չէ, այլ նա պատմական անցքերի մի օղակն է միայն... Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ վերջին տարիների ընթացքում Ռուսաստանը եղել է այնպիսի դրության մէջ, որի նմանը չունի պատմությունը»։

Յիշելով 1904 թուի դէմոսավային գործիչների ժողովի սահմանադրական առաջին պահանջները, կոմս Վիտէի յայտնի զեկուցումը և հոկտեմբերի 17-ի մանիֆէստը, ճառախօսը ապա անցնում է այն նպատակների լուսաբանության, որով ղեկավարվել են վերբերգեան կոչը ստորագրողները։

«Մենք խռովություն չէինք ուզում ստեղծել երկրում,—ասում է նա,—այլ ամրապընդել իրերի այն կարգը, որը հաստատված է Բարձրագոյն իշխանությամբ և որը մենք, իբրև քաղաքացիներ, պարտաւոր էինք պաշտպանել։ Մենք պարտք էինք համարում պաշտպանել այդ կարգը, որովհետև դրա մէջ էինք տեսնում մեր հայրենիքի հանգստության և զարգացման գրաւականը»։

Ապա ճառախօսը, մանրամասն նկարագրելով այն պայմանները, որոնք տիրում էին Վերբերգի կոչից առաջ, ասում է.

«Դումայի արձակումը մի այդպիսի մօմենտում կատարելապէս անսպասելի էր։ Մենք զգում էինք, որ մեր աչքի առջև կատարվում էր այն, որին անտարբեր վերաբերվել չէինք կարող։ Մենք վաղ առաւօտեան միայն իմացանք Գետական Դումայի արձակման մասին։ Քաղաքում կանգնել էին զօրքերը։ Մեր շենությունը փակված էր։ Քաղաքը յայտարարված էր արտակարգ պահպանության մէջ... Հաւաքվել այդպիսի պայմաններում, երբ կարող էր ընդհարում տեղի ունենալ, զոհել մեր հայաքաղաքացիների արեան կաթիլն անգամ,—այդ մեր խղճով անթոյլատրելի էինք համարում»։

Բացատրելով այն հիմնական պատճառները, որից դրդված ժողովրդական ներկայացուցիչները գնացին Վերբերգ, ընդգծում է, որ նրանք կարծում էին, թէ Դումայի արձակելը կարող էր վատ ազդել ժողովրդի վրա, որ կարող էր առաջ բերել անկարգություններ, որոնց ժողովրդական ներկայացուցիչները պարտաւոր էին նախազգուշացնել։

«Մենք կարող էինք ասել ժողովրդին, որ Դուման արձակված է և պէտք է սպասել նոր Դումային։ Մենք կարող էինք Պիրատոսի նման լուանալ ձեռքներս և ոչինչ չասել. վերջապէս, կարող էինք ասել և այն, ինչ որ արդէն ասացինք։

«Մենք քնարեցինք վերջինը...

«Մենք գիտէինք, որ ազատության ուղին, մեր իրաւունքների պաշտպանության ուղին՝ փշոտ է։ Բայց մենք գնացինք այդ շուղով։ Անձնական պատասխանատուության մասին մենք չէինք էլ մտածում։ Դա մեր, երկրորդական խնդիր էր։

Ամբողջ երկիրը հետևում է այդ դատավարության։ Նա իրաւունք ունի իմանալու՝ թէ ինչ է կատարվում և ինչի մէջ են մեղադրվում նրա նախկին ներկայացուցիչները։

«Եթէ դուք կը բանաք բանտի դռները,— վերջացնում է իր խօսքերը ծեր Պետրունկեվիչը,—մենք կը մանենք այնտեղ հանգիստ խղճով, այն գիտակցութեամբ, որ կատարել ենք մեր պարտականութիւնը հայրենիքի առաջ»։

Ճառախօսը աւարտում է իր ճառը մեռելային լռութեան մէջ, ցնցող տպաւորութեան տակ։

Այնուհետև ընդարձակ և գեղեցիկ ճառեր են արտասանում Ֆ. Ֆ. Կօկօշկինը և Նաբոկովը, որոնք մօտենում են գործին նոր լուսաբանութեամբ ու աւելի ընդարձակով։

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան ներկայացուցիչ ճառախօսները այդ օրը բաւականանում են գրանով։

Այնուհետև խօսում են սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներից Իշիրսկին և Բամիշվիլին։ Յաջորդ հաւարում կը տանք Բամիշվիլու ճառը։

## ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ոստիկանութեան անունով տուած հրամանով, ոստիկանապետը, նկատի առնելով առաջիկայ տօները, առաջարկում է պրիստաւներին և ոստիկանութեան բոլոր պաշտօնեաներին՝ ձեռք առնել հարկաւոր միջոցներ քաղաքում կարգ ու կանոնը, հանգստութիւնը և ապահովութիւնը պահպանելու, ինչպէս և միջոցներ ձեռք առնել՝ փողոցները, մայթերը, շուկաները և հրապարակները մաքուր պահելու համար։ Նաև կ՚արգելել է պրիստաւներին, որ հետևեն, որպէսզի կառապանները պատառոտած զգեստով դուրս չը գան քաղաք, և որպէսզի նրանք սահմանված սակագնից աւելի չը պահանջեն նստողներից ու վիրաւորանք չը հասցնեն նրանց կոպիտ խօսքերով։

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երևան, 19 դեկտ.

Այսօր 7-ին Երևանի նահանգական դատարանի բաժինը, նախագահութեամբ պ. Եակուբենկօյի, Հին-Նախիջևանում քննում էր տեղացի Նիկոլայոս Բագալեան Մանասերեանցի գործը, որը մեղադրվում էր նրանում, որ 1905 թ. հոկտեմբերի 4-ին, նախօրօք մտածված կերպով, ուրիշների հետ միասին տարաձայնի հարուածներով սպանել էր համաքաղաքացի Համբարձում Զաքարեանին։

Հետաքրքրական են մեղադրական թերթի հետևեալ մասը՝ իբր «Զաքարեանի սպանութեան մօտիվը եղել է այն, որ մեկ կողմից հայ յեղափոխական կոմիտէն տրամադրում էր Զաքարեանին սպանել Նախիջևանի քաղաքապետ Զաֆար-Կուլի-խանին, ինչում չը համաձայնվեց նա (Զաքարեանը)։ Իսկ միւս կողմից պատճառ եղել է այն, որ սպանութեան նախընթաց օրը Զաքարեանի ցուցմունքով ոստիկանութիւնը խուզարկութիւններ է արել Մխիթարեանցի և Սաղաթիանցի մօտ և դրանց մօտ գտել էր մի քանի հրացաններ և մեծ քանակութեամբ փամփուշտներ»։ Մեղադրում էր դատախազի օգնական պ. Կնապպէն. մեղադրելին պաշտպանում էր երդ.-հաւատարմատարի օգնական պ. Լևոն Մուշեղեանը, որը իր պաշտպանական ճառը վերջացրեց այսպէս. «Ես համոզված եմ, որ Համբարձում Զաքարեանը սպանված է հայի ձեռքով, և այդ բնական է. Զաքարեանը մատնում էր հայերին, որոնցից ամեն մէկը կարող էր իր սրտի մէջ իր սեփական խիստ վճիռը ունենալ նրա վերաբերեալ։ Բայց այդ բաւական չէ. Նիկողայոս Բագալեանին մեղադրելու համար ինձ պիտի կարողանան ապացուցել, որ այդ արիւնոտ վճիռը կատարել է նա»։

Դատարանը արդարացրեց Նիկոլայոս Բագալեանին։

Ինչպէս լսում ենք, տեղիս բանտի ժամանակաւոր (срочній) և տաժանակիր աշխատանքի ենթարկված բանտարկեալների մէջ կռիւ է ծագել։

Գ. Աղազադեանց

## ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Տարօրինակ պէտք է թւայ, բայց իրականութիւն է, որ «Աննա Կարենինա» պիէսը, որ ներկայացվեց հինգշաբթի, դեկտեմբերի 20-ին, Թիֆլիսի արտիստական թատրօնում, թարգմանված է ֆրանսերէնից ռուսերէնի։

Ինչպէս յայտնի է, «Աննա Կարենինա» վէպը պատկանում է Լեվ Տօլստոյի գրչին։ Նիւթ վերցնելով այդ վէպը, Դիրօ անունով մէկը Ֆրանսիայում կազմել է պիէս, որի անունը դրել է նոյնպէս «Աննա Կարենինա»։ Այդ պիէսը մեծ հաւանութիւն է գտել Պարիզում և թատրօններից մէկում տրվել է մի քանի շարաթ շարունակ։

«Աննա Կարենինան», պիէս դարձած, այժմ վերադարձել է այն ժայր երկիրը, որտեղ նա ստեղծագործվել է իբրև վէպ տաղանդաւոր վիպասանի ձեռքով։

Պիէսը բաղկացած է հինգ գործողութիւնից՝ եօթը պատկերով։

Թիֆլիսում «Աննա Կարենինայի» առաջին ներկայացումը ունէր անհարթութիւններ։ Դերասանական խումբը դեռ կատարելապէս չէր իշխում դերերի վրա, և մի քանի տեսարաններ անցան աւելի թոյլ և դուրկ այն կենսական աշխոյժից, որ թելադրում է տեսարանների էութիւնը։

Պիէսը ունի բժշկանութիւն և հետաքրքրական հոգեբանութիւն։ Դրամատիկական տարրը բաւականաչափ զարգացած է։

Դերակատարներից առանձնապէս աչքի էր ընկնում Աննա Կարենինայի դեր կատարող տիկին Եավօրսկայա։ Նա առաջին երկու գործողութիւնները անցկացրեց թոյլ, բայց սկսած երրորդից՝ նա հանդէս բերեց հոգեկան զեղմունքների, դրամատիկական գիրքերի մի շարք տպաւորիչ և ընտրող արտայայտութիւններ։

Սիրող

## ԹԻՒՐԲԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք. 1) Եկատերինօդարից՝ մի ոմն անյայտից՝ 10 ր., 2) Բօժի-Պրօմիսլայից՝ Յովհաննէս Բարայանի միջոցով ժողված՝ 28 բուբլի։

—

## ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՒԱՌԻ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք. 1) Կարսից՝ Յակոբ Ղազարեանցի անուանակոչութեան հանդիսում ժողված, Ա. Ղորխմազեանի միջոցով՝ 11 ր., 2) Ելենօվկայից՝ Գէորգ Բուրնազեանից՝ 5 բուբլի։

## ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակ Մոսկվայից)

—

Ընթերցողը գիտէ, որ Շուշու թեմական դպրոցի Ե. և Զ. դասարանները փակված են և աշակերտները փողոց նետված։ Յայտնի է նաև այն, որ այդ դասարանները, ինչպէս դպրոցի հոգաբարձունները յանձին Աշոտ եպիսկոպոսի բացատրեցին, «սուղ միջոցների» պատճառով է փակված։

Ասել թէ փող չը կայ, այդ դեռ բաւական չէ. պէտք է ապացուցել, և ապացուցել համոզեցուցիչ փաստերով։ Պէտք է հրապարակական հաշուետուութիւն տալ հայ հասարակութեան, որ դպրոցի միջոցները յիրաւի որ սուղ են, որ նա նեղութեան խնդրում անխախտանելի վիճակի մէջ է գտնվում, և որ ամենալխաւորն է, պարզել դպրոցի իրաւատէր հայ հասարակութեան, թէ ինչու Շուշու թեմականը վերջին 2—3 տարում այնքան աղքատացաւ, որ ստիպված եղաւ վերջին երկու դասարանները փակել։

Ընդունենք սակայն, որ թեմական դպրոցի սեփական աղբիւրները այնքան քիչ են, որ ստացած արդիւնքներով դպրոցի գոյութիւնն անկարող է պահպանվել։ Ընդունենք նաև այն, որ հայ-թուրքական ընդհարումների պատճառով նրա միջոցները պակասել են և նա առանց ժամանաւոր օգնութեան պահպանվել չէ կարող։ Ամենքիս յայտնի է, որ անցեալ ձմեռ մի պատգամաւորութիւն՝ յանձին Աշոտ եպիսկոպոսի՝ գնացել էր Բագու նպաստներ ժողովելու դպրոցի օգտին։ Տղերքիս գրողը այն ժամանակ Շուշի էր։ Աշոտ եպիսկոպոսը մի քանի ամիս Բագու մնալուց յետոյ վերադառնում է Շուշի և իր մի քարոզի մէջ յայտնում է հասարակութեան, «որ դպրոցի օգտին ժողոված փողը կը պահպանի նրա գոյութիւնն երկու տարի ևս»։ Թէ Աշոտ եպիսկոպոսը որպիսի գումար էր ժողովել, այդ մեզ յայտնի չէ, քանի որ նա հրապարակով հաշիւ չէ տուել և այդ մասին ոչ մի խօսք չէ գրել մամուլում։ Նրա խօսքերից պարզ էր միայն այն, որ դպրոցը իր բոլոր դասարաններով պիտի շարունակէր պահպանել իր գոյութիւնը, բարեկարգվէր նրա վիճակը... Եւ ինչ ես կարծում, ընթերցող, դպրոցը բարեկարգվեց, ծաղկվեց։ Ո՛չ. նա ոչ միայն չը բարեկարգվեց, այլ և վատթարացաւ, ընկաւ, և որ գլխաւորն է, երկու բարձր դասարաններից էլ զրկվեց... Եւ այս մեր մտայլ իրականութեան մէջ գործող մութ ոյժերի տրամաբանութեամբ առաջադիմել կը նշանակէ։ Այդպէս վարվեցին, որովհետև բրոնազօսիկ պարոնների ինտրիկաը այդ թելադրեց նրանց անելու։ Փակեցին, որովհետև բռնակալ հոգաբարձութիւնն այդպէս տրամադրվեց անելու։ Մի քանի տասնեակ աշակերտների փողոց նետեցին, որովհետև մատաղ սերնդի կրթութեան գործը նրանց սրտին մօտ չէ...

Եւ այդպէս վարվողները, ընթերցող, նրանք են, որոնք ամեն տեղ պոռում են, թէ հարկաւոր է մեր դպրոցները վերածել աշխարհիկ դպրոցների, որ պէտք է նրան պահել ժամանակակից ոգով և, որ գլխաւորն է, ժողովրդականացնել նրան։ Մենք սկզբունքով համաձայն ենք այդ պարոնների հետ. մեզ համար հասկանալի է այն, որ գիտութիւնը պէտք է ժամանակի դարձնել, ժողովրդականացնել, աշխարհականացնել։ Բայց որպիսի անդունդ այդ պոռոտախօսների խօսքի և գործի մէջ. որպիսի հակասութիւն նրանց դաւանանքի, հիմնական գաղափարների և գործելակերպի մէջ։ Եւ նրանք գործի գլուխ անցնելով, փոխանակ դպրոցը բարձրացնելու, ծաղկեցնելու, աւելի ձգեցին, աւելի վատթարացրին։ Իսկ այդ մեզ չէ զարմացնում, քանի որ գիտենք ում հետ գործ ունենք, ովքեր են մեր մթնոլորտում գործողները...

Փողոց նետված աշակերտները մեր թեմականների շէնքերը մաշելուց յետոյ, ծանր պարտքերով տուն են վերադարձել։ Ոչ մի տեղ գարունը չը ժպտաց նրանց, մեր ոչ մի դպրոցում մի անկիւն չը շնորհեցին խեղճ արարածներին։ «Տեղ չկայ»—ահա աշակերտների ստացած ընդհանուր պատասխանը։ Տեղ չկայ. խեղճերի, թշուառների համար միշտ տեղ չէ լինում։ Օհ, որքան դժբաղդ ես, բաղդի խորթ զաւակ... Եւ այդ անդէն արարածները, յոյսները կրած կեանքի անողորմ կուում, «Մշակի» № 116-ում զետեղած իրանց նամակի մէջ, ի միջի այլոց, ասում են. «Մենք փողոց ենք նետվում... Մենք գլորվում ենք հասարակութեան լայն խաւերի ծոցը, բայց մեզնից ինչ օգուտ հասարակութեան։ Պարզ է, որ հասարակութիւնը երբէք չի ճաշակի այն պղտից, որը տհաս է, հոտ չի առնի այն վարդի կոկոնից, որը դեռ չէ բացվել և որոնց նմանը մենք ենք համարվում։ Այժմ ուր գնանք, ուր... քեզնից ենք հարցնում, լռած, պապանձված հայ հասարակութիւն։ Մեզ մի ճանապարհ ցոյց տուր։ Մեր աղքատ, անկար ու անմխիթար ծնողների արցունքոտ հայեացքները մեզ են ուղղված և այլ»...

Հայ հասարակութիւն. ոդպիսի հեգնանք...

Մթթէ հայ հասարակութիւն գոյութիւն ունի մեր իրականութեան մէջ, մթթէ նա իր կոչման բարձրութեան վրա է կանգնած և, վերջապէս, մթթէ նա մատաղ սերնդի կրթութեան մասին մտաչափ մտածել անգամ գիտէ... Ո՛չ, նա այդ չը գիտէ, նա մեռած է, նա անընդունակ է իր հասարակական գործերում։ Նա բարոյապէս ընկած է։ Եւ եթէ այսօր հայ հասարակութիւն, բառիս ամենաընդարձակ մտքով, ուներ, եթէ նա դպրոցի կրթութեան զեկը իր ձեռքն առած լինէր, այն ժամանակ այսօր այդպիսի բան տեղի չէր ունենայ Շուշու թեմական դպրոցի կեանքում։

Շուշու թեմական դպրոցի վերջին երկու դասարանների փակման առիթով երկար գրելու ցանկութիւն չունեմ, քանի որ նա կատարված մի տխուր փաստ է առանց այն էլ Շուշու մայր իրականութեան մէջ։ Ես վերջացնելով գրելիքս, միանում եմ պ. Շուշիցու այն մտքի հետ, որ «Մշակի» № 108-ում զետեղած մի նամակով դիմում է Աշոտ եպիսկոպոսին և Բագուում ստացած դրամների քանակի և գործադրութեան մասին հաշիւ պահանջում։ Աշոտ եպիսկոպոսը, որ յաճախ սիրում է խօսել ճշմարտութեան անունից, նա, որ վայելուչ կարգերի և օրէնքների հարազատ է, թող բարեհաճէ հրապարակական հաշուետուութիւն տալ այդ մասին և մանրամասն բացատրէ այն հանգամանքներն ու շարժառիթները, որ ստիպել են այդ անզգոյշ քայլն անելու, փակելու երկու դասարան և աշակերտներին փողոց նետելու։ Թող նա փաստերով ապացուցէ մեզ, որ եթէ դպրոցը միջոցներ չունէր, ինչպէս նա համարձակվեց, մինչև հանդգնակութեան ձեռնարկելը՝ դպրոցի 1906/7 ուսումն. տարվայ բիւդջէն մօտ 20 հազար բուբլու՝ Շուշու թեմականի համար մի չը տեսնված՝ գումարի հասցնել և այդպիսի խոշոր գումար ծախսելուց յետոյ, դպրոցը, բացառութեամբ 3—4 ուսուցչի, լցնել դպրոցաւարտ երեխայ-ուսուցիչներով։ Ուսուցիչներ, որոնք իրանց կեանքի մեծ մասը «Контора»-ներում էին անցկացրել, որոնք փողոցներով թրև էին գալիս, բայց Աշոտ եպիսկոպոսի հովանաւորութեան տակ նրանք դասն և՝ գործելու «ասպարէզ», և՝ լաւ պաշտօններ։ Ուսուցիչներ, որոնք իրանց կեանքում ոչ միայն մի մանուկի երկու բառ չէին սովորեցրել, այլ և մանկավարժութիւն ասած բանը նրանց համար օտարոտի է, մանկավարժութեան մասին նրանք այնքան հակացողութիւն ունեն, որքան խոզը մարգարտի մասին։

Մենք մի անգամ ևս դառնում ենք ձեզ, և իբրև հասարակութեան մի անդամ, հաշիւ պահանջում այն ստացած գումարների և ծախքերի համար, որ հայ հասարակութիւնը տուել է ձեզ Բագուում։

Ոսկու-Զօն

## ՄԻ ԴԱՌՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ

—

Ոչ ոքի համար գաղտնի չէ, որ Ներսիսեան դպրոցի սաները աղքատ ընտանիքների զաւակներ են, բայց շատերը չը գիտեն, թէ որ աստիճանի չքաւոր են նրանք և ինչեր են քաշում իրանց դպրոցական երկար կեանքում։ Իբրև բժիշկ՝ ես մտած եմ այնպիսի բներ, տեսած եմ այն աստիճան չքաւորութիւն, տեսած եմ այն տեսակ սոսկալի տեսարաններ, որ մտաբերելիս փշաքաղվում եմ։

Իմ բժշկութեան երկար ստատիստիկան ակներև է արել այն դառն իրողութիւնը, որ ուսումնական տարվայ ընթացքում աշակերտների 72%-ը հիւանդացել է։ Նրանք դիմել են ինձ աւելի քան 1000 անգամ։ Եւ երբ ուսումնասիրում ենք հիւանդութիւնները, տեսնում ենք, որ նրանք pus պատճառի բաժանվում են հետևեալ կատեգորիաների —gurs, vas սնունդ, խոնաւութիւն։ Այս երեք հիմնական գործօններն են եղել մեր դպրոցի սաներին հիւանդացողները, յաճախ շատ լուրջ կերպով, երբեմն մահացու, կամ թողնելով քայքայված կազմուածք, սրտի և երիկամունքների յարատև արատ ու թոքախտ։

Ցուրտ... այո, ցուրտ, գետնափոր նկուղներում, կիսափայտաշէն խրճիթներում, կոլոլ-թաղի բարձրերում, ձմեռվայ կատաղի քամիների բերանին, որը ձիւն է շպրտում դպրոցում մի անկիւն չը շնորհեցին խեղճ արարածներին։ «Տեղ չկայ»—ահա աշակերտների ստացած ընդհանուր պատասխանը։ Տեղ չկայ. խեղճերի, թշուառների համար միշտ տեղ չէ լինում։ Օհ, որքան դժբաղդ ես, բաղդի խորթ զաւակ... Եւ այդ անդէն արարածները, յոյսները կրած կեանքի անողորմ կուում, «Մշակի» № 116-ում զետեղած իրանց նամակի մէջ, ի միջի այլոց, ասում են. «Մենք փողոց ենք նետվում... Մենք գլորվում ենք հասարակութեան լայն խաւերի ծոցը, բայց մեզնից ինչ օգուտ հասարակութեան։ Պարզ է, որ հասարակութիւնը երբէք չի ճաշակի այն պղտից, որը տհաս է, հոտ չի առնի այն վարդի կոկոնից, որը դեռ չէ բացվել և որոնց նմանը մենք ենք համարվում։ Այժմ ուր գնանք, ուր... քեզնից ենք հարցնում, լռած, պապանձված հայ հասարակութիւն։ Մեզ մի ճանապարհ ցոյց տուր։ Մեր աղքատ, անկար ու անմխիթար ծնողների արցունքոտ հայեացքները մեզ են ուղղված և այլ»...

Հայ հասարակութիւն. ոդպիսի հեգնանք...

Մթթէ հայ հասարակութիւն գոյութիւն ունի մեր իրականութեան մէջ, մթթէ նա իր կոչման բարձրութեան վրա է կանգնած և, վերջապէս, մթթէ նա մատաղ սերնդի կրթութեան մասին մտաչափ մտածել անգամ գիտէ... Ո՛չ, նա այդ չը գիտէ, նա մեռած է, նա անընդունակ է իր հասարակական գործերում։ Նա բարոյապէս ընկած է։ Եւ եթէ այսօր հայ հասարակութիւն, բառիս ամենաընդարձակ մտքով, ուներ, եթէ նա դպրոցի կրթութեան զեկը իր ձեռքն առած լինէր, այն ժամանակ այսօր այդպիսի բան տեղի չէր ունենայ Շուշու թեմական դպրոցի կեանքում։

Շուշու թեմական դպրոցի վերջին երկու դասարանների փակման առիթով երկար գրելու ցանկութիւն չունեմ, քանի որ նա կատարված մի տխուր փաստ է առանց այն էլ Շուշու մայր իրականութեան մէջ։ Ես վերջացնելով գրելիքս, միանում եմ պ. Շուշիցու այն մտքի հետ, որ «Մշակի» № 108-ում զետեղած մի նամակով դիմում է Աշոտ եպիսկոպոսին և Բագուում ստացած գրամների քանակի և գործադրութեան մասին հաշիւ պահանջում։ Աշոտ եպիսկոպոսը, որ յաճախ սիրում է խօսել ճշմարտութեան անունից, նա, որ վայելուչ կարգերի և օրէնքների հարազատ է, թող բարեհաճէ հրապարակական հաշուետուութիւն տալ այդ մասին և մանրամասն բացատրէ այն հանգամանքներն ու շարժառիթները, որ ստիպել են այդ անզգոյշ քայլն անելու, փակելու երկու դասարան և աշակերտներին փողոց նետելու։ Թող նա փաստերով ապացուցէ մեզ, որ եթէ դպրոցը միջոցներ չունէր, ինչպէս նա համարձակվեց, մինչև հանդգնակութեան ձեռնարկելը՝ դպրոցի 1906/7 ուսումն. տարվայ բիւդջէն մօտ 20 հազար բուբլու՝ Շուշու թեմականի համար մի չը տեսնված՝ գումարի հասցնել և այդպիսի խոշոր գումար ծախսելուց յետոյ, դպրոցը, բացառութեամբ 3—4 ուսուցչի, լցնել դպրոցաւարտ երեխայ-ուսուցիչներով։ Ուսուցիչներ, որոնք իրանց կեանքի մեծ մասը «Контора»-ներում էին անցկացրել, որոնք փողոցներով թրև էին գալիս, բայց Աշոտ եպիսկոպոսի հովանաւորութեան տակ նրանք դասն և՝ գործելու «ասպարէզ», և՝ լաւ պաշտօններ։ Ուսուցիչներ, որոնք իրանց կեանքում ոչ միայն մի մանուկի երկու բառ չէին սովորեցրել, այլ և մանկավարժութիւն ասած բանը նրանց համար օտարոտի է, մանկավարժութեան մասին նրանք այնքան հակացողութիւն ունեն, որքան խոզը մարգարտի մասին։

Մենք մի անգամ ևս դառնում ենք ձեզ, և իբրև հասարակութեան մի անդամ, հաշիւ պահանջում այն ստացած գումարների և ծախքերի համար, որ հայ հասարակութիւնը տուել է ձեզ Բագուում։

Ոսկու-Զօն

## ՄԻ ԴԱՌՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ

—

Ոչ ոքի համար գաղտնի չէ, որ Ներսիսեան դպրոցի սաները աղքատ ընտանիքների զաւակներ են, բայց շատերը չը գիտեն, թէ որ աստիճանի չքաւոր են նրանք և ինչեր են քաշում իրանց դպրոցական երկար կեանքում։ Իբրև բժիշկ՝ ես մտած եմ այնպիսի բներ, տեսած եմ այն աստիճան չքաւորութիւն, տեսած եմ այն տեսակ սոսկալի տեսարաններ, որ մտաբերելիս փշաքաղվում եմ։

Իմ բժշկութեան երկար ստատիստիկան ակներև է արել այն դառն իրողութիւնը, որ ուսումնական տարվայ ընթացքում աշակերտների 72%-ը հիւանդացել է։ Նրանք դիմել են ինձ աւելի քան 1000 անգամ։ Եւ երբ ուսումնասիրում ենք հիւանդութիւնները, տեսնում ենք, որ նրանք pus պատճառի բաժանվում են հետևեալ կատեգորիաների —gurs, vas սնունդ, խոնաւութիւն։ Այս երեք հիմնական գործօններն են եղել մեր դպրոցի սաներին հիւանդացողները, յաճախ շատ լուրջ կերպով, երբեմն մահացու, կամ թողնելով քայքայված կազմուածք, սրտի և երիկամունքների յարատև արատ ու թոքախտ։

Ցուրտ... այո, ցուրտ, գետնափոր նկուղներում, կիսափայտաշէն խրճիթներում, կոլոլ-թաղի բարձրերում, ձմեռվայ կատաղի քամիների բերանին, որը ձիւն է շպրտում ժանկան ցնցոտած վերմակի վրա, պատռելով լուսամուտին ծեփած թուղթը...

Լաւ եմ յիշում այդ դաժան երեկոն։ Ջիւնարեր քամին պոկում էր խիճիթների ծածկերը. մի եղանակ, երբ «տէրը շանը դուրս չի հանի»։ Մի նեղ փողոցով, պատերին յենվելով, բարձրանում էինք Բեթղեհէմի թաղը։ Ոտերս սայթաքում էին սառած գետնի վրա, կատաղած քամին թռցնում էր գլխարկս իմ գլխից, շրջափաթեցնում էր երեսիս կարկտի ժանր հատիկներ, որոնք ասեղի նման ծակոտում էին դէմքս։ Նա—մի 12 տարեկան երեխայ—պառկած էր լուսամուտի տակ, իսկ ջարդոտված ապակիներից վազում էր բուքը... Խրճիթ էր սա, թէ քարայր։ Լեռան ապառաժը կազմում էր յետին պատը և նրա միջից ծորում էր խոնաւութիւնը։ Վառարան չը կար։ Այս սառնամանիքի մէջ Տիգրանի մարմինը այրվում էր, հաղը քանդում էր թոքերը, խորխը արիւնոտ էր...

Յիշում եմ Միխակին. լաւ էր սովորում նա, խելացի էր։ Առաւօտը դպրոցումն էր պարապվում իր դասերով, իսկ ճաշից յետոյ (մեր ճաշին, որովհետև ինքը չէ գիտէր՝ ճաշն ինչ է) մօրն էր օգնում՝ լուացքի բօխչէքը Կուրն էր տանում, կրակ էր անում, տնէ-տուն էր շրջում։ «Եօրդան-դօշակ» ընկաւ նա և հաղում էր։ Ձեռս բռնած իջեցրին ինձ մի անդունդ։ Օր-ցերեկով ամեն ինչ սև էր այնտեղ։ Գետնափորը փորված էր արտաքնոցի հորի կողքին։ Պատը ծածկված էր գարշահոտ բորբոսով. առաստաղի տակ մի ծակ կար, որից կեղտոտ լոյս էր թափանցում։ Ակամայ յիշեցի Շեքսպիրի ամրոցի բանտերը և Վենետիկի տանջանքների ընները։ Շունը կը սատկէր այդ բնում, բոյսը կը թառամէր, բայց այստեղ էր պառկած թոքախտոտ Միխակը։

Շատ Միխակներ ու Տիգրաններ եմ ճանաչել. սրանք անհատներ չեն։

Տեսել եմ մանուկներ ու պատանիներ, որոնք ամիսներով տաք կերակուր չէին կերած։ Տեսել եմ տղաներ, որոնք ցամաք հացի փշրանքներ են գտել... խոհարարներից։ Տեսել եմ այնպիսիներին, որոնք երեկոյեան փողոցի լապտերի լուսով են դաս սովորել։ Տեսել եմ շատ-շատերին, որոնք դպրոցից ստացած հինգ բուբլի թոշակը իրանց մօրն են տուել «երեխէրքի համար»։ Տեսել եմ հողէ յատակի վրա 5—6 երեխայ իրար վրա պառկոտակած։ Տեսել եմ ամբողջ ընտանիքը քութէշով բռնված։ Տեսել եմ հայր, մայր, զաւակներ բոլորը թոքախտոտ։ Բոսը, անասելի կեղտ այս արտայայտութիւնը, առօրեայ երեոյթ է դպրոցի սաների մէջ։

Ո՞րն ասեմ։

Այսպիսի պայմաններում բժշկութիւնը, դեղեր տալը կարծես մի ծաղր է։

Դեղ՝ ցրտից ու խոնաւութիւնից գոսացած յօդերի համար, երբ հիւանդը շարունակում է փաել նկուղում առանց արեի։ Դեղ՝ թոքախտի դէմ, երբ երեխայի շնչած օդը լի է թոյնով։ Դեղ հազի դէմ, երբ հիւանդի մարմինը հաղիւ է ծածկված ցնցոտիներով։ Դեղ ջերմի ու մալարիայի դէմ, երբ մալարիայի բնի մէջն է պառկած հիւանդը։ Դեղ ստամոքսի կատարրի, արնատութեան դէմ, երբ հիւանդի ամբողջ սնունդը հացից ու գետնախնձորից է բաղկացած, երբ «բաժինը» միայն ոսն օրերն է ձեռք ընկնում։

Ծաղր չէ՞ սա արդեօք։

«Դէպք է առաւօտները մի բաժակ կաթ խմես»,—ասում ես հիւանդին և զղջում, որ ասացիր, երբ նայում ես նրա կիսամաղրական, կիսամայլ դէմքին։ Կաթ։ Իսկ ո՞ր գումարով առնի նա մի բաժակ կաթը։

«Սենեակդ խոնաւ է, պէտք է չոր բնակարան վարձէք»։ Վարձէ՛ր։ Բայց չէ՞ որ նրա մայրը «խոզէնի» ոտերն ընկնելով հազիւ կարողացել է բուն դնել ոտն նկուղի մէջ, առանց վարձի։

«Սմառը պիտի գիւղ գնաս, լաւ օդի մէջ ապրես»,—ասում ես թոքախտաւորին։ Տղան երեսիդ ոչինչ չի ասում, արհամարհական ժպիտով շուռ է գալիս և դուրս գնում ու մտքում գուցէ և ասում է. «Գժվէ՛լ է էս մարդը»։

Երբեմն անհուն թշուառութեան մէջ՝ դպրոցի աշակերտը, քիչ բացառութեամբ, լալ գանգատվել չը գիտէ։ Վեհանձնութիւն աղքատութեան մէջ...

Մի փոքրիկ տղայ արգելում էր մօրը դպրոց մտնել. «շորերդ պատռված են, ամօթ է»։

Մի հիւանդ պատանու սեղանի վրա մի բուբլի թողեցի. մի շաբաթից յետոյ ինձ վերադարձրեց, կարծես վիրաւորված։

Երբ հարցնում եմ՝ «ինչով ես կերակրվում», շատերը չեն պատասխանում կրկնակի հարցմունքիս, որպէսզի ստիպված չը լինեն ասելու՝ «ցամաք հացով»։

Մի տղայի ոտերը ծածկված էին խոցերով ու քերծուածքներով. պատճառը նրա կոշտ ու ամէ կիսակօշիկներն էին։ Ասացի, որ պիտի ուրիշ կօշիկ առնի։ Տղան այլ ևս աչքիս չերևաց։ Մի ամսից յետոյ պատահմամբ հանդիպեցի նրան փողոցում։ Նա կաղ-կաղ գնում էր նոյն կօշիկները հագին։

Եւ այսպիսի պայմաններում, տղան պիտի դաս սովորի, ուսում առնի։ Մի հատիկ սենեակ, մի հատիկ սեղան, տունը լիքը լացող, ճչաչացող երեխաներով, մայրը մի անկիւնում լուացք է անում, հայրը, երբեմն արբած, միշտ յոգնած խոմփում է թախտի վրա. «թունդաբէ լամպի» լոյսը հազիւ թափանցելով սենեակի թանձրացած մառախուղում օդը՝ քօռացնում է տղայի աչքերը։ Կարծեմ ոչ մի դպրոցի սաներ աչքացաւերի այնքան մեծ տոկոս չեն տալիս, ինչքան Ներսիսեան դպրոցինը։ Մէջքը ծռուած, տեսողութիւնը չարաչար լարած, աշակերտը դաս է պատրաստում և առաւօտը դիմում է բժշկին, կարմրած կոպերով ու գլխացաւով։ Կան շատերը, որոնք առանց ակնոցի անկարող են պարապել։ Նշանակում ես ակնոց և թուղթը «մօրս մօտ է» ասում յաւիտեան։

Սրանց օգտին է ամսիս 27-ի երեկոյթը։

Բժ. Վ. Արծրունի

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Դեկտ. 19-ին Պետերբուրգից Բագու է եկել պրոֆէսօր Մառը, որ, ինչպէս յայտնել էինք, երեք դասախօսութիւն է կարդալու Անիում կատարած իր պեղումների մասին։

✦ 1907 թ. № 77 հաց տեղափոխելու արժան տարիքը կարգադրված է գործադրել և Երևանեան նահանգի վերջերութեամբ անբերրութիւնից վնասված տեղերը հաց ուղարկելու համար։ Ապրանքները ուղարկվելու են Կալագէրան-Սրավկա-Կարաքաղ, Ալէքսանդրօպոլ-Երևան և Ուլուխանլու-Զուլֆա կայարանները։

✦ Վերջերս Թիֆլիսի նահանգապետը քաղաքային վարչութեանն էր ուղարկել մահմեդականների խնդրագիրը, որով վերջինները խնդրում են թոյլատրել մահմեդական մսավաճառների համար յատուկ սպանդանոց բանալ։ Այժմ քաղաքագլուխը պատասխանել է նահանգապետին, որ այդ հարցը յարուցված է եղել դեռ անցեալ տարի քաղաքային դումայում, բայց այն ժամանակ արդէն մերժված է։

✦ Ինչպէս գիտեն ընթերցողները, ահա երրորդ ամիսն է գնում, ինչ խմիչքավաճառների, պանդոկների և գինետների ծառայողները գործադուլ են անում։ Չը նայած իշխանութեան խիստ միջոցներին, նրանք յամառութեամբ չը դիմեցին։ Տէրերը ժողով գումարեցին և մշակեցին մի քանի որոշումներ, որ և առաջարկեցին ծառայողներին, բայց սրանք կրկին գործադուլը շարունակեցին։ Այժմ տէրերը վերջնականապէս յայտնում են, որ եթէ ծառայողները մինչև 1908 թ. յունվարի 1-ը չընդունեն իրանց առաջարկած պայմանները, նրանք յունվարից իրանց խանութները բանալու են ընկերակցական հիմունքներով։

✦ Թիֆլիսի ժողովարանի հանգուցեալ քարտուղար Թօջէէնթեանը, ինչպէս պարզվել է քննութիւնից, իր կենդանութեան ժամանակ ժողովարանի գումարներից իւրացրած է եղել մօտ 3000 բուբլի։ Այդ առիթով դեկտ. 20-ին ժողովարանում անդամները խորհրդակցութիւն են կազմում, որի ժամանակ տեղի են ունենում տաք վիճաբանութիւններ։ Անդամների մի մասը առաջարկել է յիշեալ 3000 բուբլին ծածկել անդամներից, միւս մասը պնդել է, որ պէտք է վերցվի հանգուցեալի ժառանգներից։ Բայց և այնպէս ժողովը վերջ է վերջոյ դրական մի կէտի չէ կարողանում յանգել։ Յետաձգվում է նաև 64 թեկնածուներին անդամ դարձնելու խնդիրը։

✦ Երէկվանից Սօլդատսկի բազարում հաստատվից ժամանակաւոր քննիչ կայարան (Смотровая станція) քաղաք ներմուծված խոզի ձագերին խոշորացուցային քննութեան ենթարկելու համար։ Այդ կայարանը բաց կը լինի ամեն օր մինչև յունվարի 7-ը, առաւօտեան ժամը 9-ից մինչև 1-ը և ճաշից յետոյ ժամը 3-ից մինչև 5-ը։ Կայարանի համար քաղաքային վարչութիւնը նշանակել է մի անասնաբոյժի և մի պրեպարատիստի։

✦ Թիֆլիսի նահանգապետը Կովկասի Փոխարքային ուղարկել է «կառավարական և հասարակական հաստատութիւնների ծառայողների փոխադարձ օգնութիւն հասցնող Թիֆլիսի ընկերութեան» կանոնադրութեան նախագիծը՝ հաստատելու համար։

✦ Երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարչի Կովկասի լիազօր Մեդվեդիէվը, ինչպէս ասում են, ստանում է նոր պաշտօն։ Լուրերին նայած, Կովկասի լիազօրի պաշտօնը վերացվելու է։

✦ Վաղը, կիրակի, դեկտեմբերի 23-ին, երեկոյեան ժամը 6-ին, կովկասեան բժշկական ընկերութեան շինութեան մէջ (Դէօրգէվկի փող. տ. № 4, Ալէքսանդրեան այգու մօտ) բժ. Ա. Խատիսեանը ռուսերէն լեզուով դասախօսութիւն կը կարդայ թոքախտի մասին, իսկ ժամը 7-ից բժ. Վ. Արծրունին կը դասախօսէ նոյն նիւթի մասին հայերէն լեզուով։ Դասախօսութիւնների ժամանակ ցոյց կը տրվեն մոգական պատկերներ։ Մնդրվում է երեխաներին չը տանել։

✦ Առաջիկայ 1908 թուականին Մոսկվայում տեղի կունենայ մի կլիմայավարժական ցուցահանդէս, որի կազմողն է Մոսկվայի կլիմայավար

րից անցնում է, այն ժամանակ պարզ կը լինի, թէ իւրաքանչիւր ծառայողի ինչպիսի գումար բաժին կընգնի իրրև նուէր։

✦ Թիֆլիս է եկել մի պատգաւորութիւն Բաթումի շրջանի կենտրիշկի գաւառամասից, որին լիազօրութիւն է տրված խնդրել Փոխարքայից, որ իրանց գաւառամասի զինւորական դրութիւնը վերացվի կամ թէ փոխարինվի ուժեղացրած պահնորդութեամբ։

✦ Այսօր, շաբաթ, Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ կը կայանայ վարչութեան և ֆինանսական ժամանաժողովի միացեալ նիստը 1908 թ. նախահաշիւը քննելու համար։

✦ Թիֆլիսի գործակատարների փոխադարձ ընկերութեան օգտին, դեկտ. 23-ին, ժողովարանում, հայ դերասանական ընկերակցութիւնը ներկայացնելու է Փափազեանի «Ծայր» դրաման։ Ներկայացման տոմսակներ գնողները մուտքի փող չեն վճարում։ Ընկերութիւնը իր միջոցներով պահում է մի դպրոց, ուր ուսանում են բացառապէս գործակատարների որդիները։

✦ Մրգարուծութեան Թիֆլիսի ընկերութեան նախագահ Գ. Գօգոլ-Եանովսկին մեկնում է Պետերբուրգ, մասնակցելու համար այն խորհրդակցութեան, որին պաշտօն է տրված միջոցներ մշակել գինին կեղհելու առաջն առնելու համար։

✦ Ստացանք 1) Լեոն Մելիք-Ադամեանցի «Իմ պատանքը բարոյապէս ընկած և ամենից արհամարհուածին», 276 երես, գինն է 50 կոպէկ, 2) «Հասկեր» մանկական պատերազմի ամսագրի № 11 նոյեմբեր։

✦ «Մշակի» № 171-ում Քերբուշ գրված նամակում սղրդել է մի սխալ։ տպված է Կարման գիւղացի, պէտք է լինի՝ Կարճեւան գիւղացի։

## ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Դեկտեմբերի 17-ին Ուամլեան փողոցում նետված ռումբից սպանվածը, ինչպէս պարզվել է, եղել է Թիւնեթի գաւառի բնակիչ Ալէքսէյ Լեկիշվիլին։

—

Դեկտեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիսի Մեքսիկեան հիւանդանոցի գրասենեակից հեռախօսով յայտնել են 5-րդ քաղաքամասի պրիստաւին, որ Պուշկինի փողոցում գտնվող քաղաքային մարկի ընկերութեան տնից հիւանդանոց է տրված մի անյայտ օրիորդ, որը թունաւորվել է տարիխինով և որը խիստ վատամնվել է։ Այդ օրիորդը եղել է, ինչպէս պարզվեց, առատարարդի դուստր Բօպա Պլէքանովին, 22 տարեկան։ Գեղեցիկը մի նամակ է թողել, որով խնդրում է իր մահվան մէջ ոչ ոքի չը մեղադրել։

—

Դեկտեմբերի 20-ին, երեկոյեան ժամը 7-ին, երբ Թիֆլիսի վաճառական Սիմոն Պարսեղովը խանութը փակելուց յետոյ տուն էր վերադառնում, Գօրիցկոյի փողոցում իր տան մօտ նրա վրա յարձակվել են 3 զինված անյայտ չարագործներ, որոնցից մէկը ատրակել է «руки верхъ» և, կրծքին դնելով տաբանակը, փող է պահանջել։ Պարեղովը բարձրացրել է իր մօտ գտնվող ձեռնափայտը և նրանով մի քանի անգամ խրել է չարագործներից մէկի գլխին, ոլոր յետոյ բոլոր չարագործները, ոչինչ չը վերցնելով, փախուստի են դիմել, մի քանի անգամ կրակելով օդում։

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

✦ Վերջին ամիսներս ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բազմաթիւ դիմումներ է ստանում միջնակարգ դպրոցներում քննութիւնները վերացնելու մասին։ Այդ նպատակով ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան խորհուրդը նիստ է ունեցել դեկտեմբերի 8-ին, որտեղ մինիստր Կաուֆմանը կարդացել է իր ժամանված այն բոլոր թղթերը, որոնք ստացվել են ծնողական կոմիտեներից, քաղաքային վարչութիւններից և հասարակական ուրիշ կազմակերպութիւններից։ Այդ բոլորը պերճախօս կերպով ապացուցանում են, որ անհրաժեշտ է վերացնել քննութիւնները միջնակարգ դպրոցներում։ Քննութիւնների և թեանշանները դնելու սիստեմի իրրև անմիջական արդիւնք ստացվել է հետևեալը. վերջին 5 տարվայ ընթացքում 78 աշակերտներ անձնասպանութեան փորձ են արել, 136 հոգի ինքնասպանութիւն են գործել, 290 հոգի թեանշանների պատճառով հրաժարվել են շարունակել իրանց ուսումը, 4.700 հոգի հարկադրված են եղել դուրս գալ դպրոցներից՝ աշակերտական առաջադիմութիւնը անարդար կերպով գնահատելու պատճառով և մօտ 10 հազար աշակերտներ արտաքսվել են ուսումնարաններից թոյլ սովորելու համար։ Քննութիւնները վերանորոգելու անհրաժեշտութիւնը, նոյնիսկ իւրաքանչիւր առարկայի համար առանձին, պարզելու դիտաւորութեամբ կազմված է մի յանձնաժողով մինիստրի օգնական Գերասիմովի գլխաւորութեամբ, որի կատարած աշխատութիւնները լոյս կը տեսնեն առաջիկայ տարվայ մարտի 15-ից ոչ վաղ։ («Русь»)

✦ Դեկտեմբերի 13-ին Պետերբուրգում տեղի է ունեցել առևտրի և արդիւնաբերութեան համագումարի խորհրդին կից բորդ նիստը՝ քննելու համար ուսաց երկաթուղիներին շարժական կազմ մատակարարելու հարցը, որ մտադիր է յանձն առնել Ֆրանսիական սինդիկատը։ Նիստին ներկայ է եղել նաև սինդիկատի ներկայացուցիչը։ Այդտեղ պարզվել է, որ սինդիկատի առաջարկած պայմանները, որոնք սկզբում ընդունվել էին հարաւ-արևելեան երկաթուղային ընկերութեան կողմից, չափազանց անձեռնտու են և նոյնիսկ ստորացուցիչ՝ Ռուսաստանի համար։ Սինդիկատի ներկայացուցիչը աշխատել է արդարացնել այդ պայմանները՝ մատնանշելով ուսաց գործարանների անընդունակութիւնը կատարելու առաջիկայ պատուէրները, ռուսական ֆինանսական շուկայի անելանելի դրութիւնը։ Սակայն այդ բացատրութիւնները խորհրդի կողմից համարվել են միանգամայն անբաւարար։ Ընդհանուր կարծիքը այն է, որ այդ օպերացիան պէտք է ձևակերպված լինի բացառապէս արտաքին ճնշումների շնորհիւ։ Նիստում բացարձակ կերպով խօսում էին՝ թէ ինչպիսի դեր են խաղացել Ռուվիէի և Կոկովցեվի բանակցութիւնները, երբ վերջինս արտասահմանումն էր։ Խորհրդակցութիւնը որոշել է խնդրել հաստատարանի խորհրդին միջնորդութիւն յարուցանելու կառավարութեան առջև՝ բեկանելու հարաւ-արևելեան երկաթուղիների ընկերութեան և յիշեալ սինդիկատի միջև արդէն կազմված, բայց դեռ ևս չը ստորագրված, պայմանագիրը։ Խորհրդակցութեան ժամանակ հեռագիր է ստացվել Ֆրանսիայից, որով հաղորդում են, որ այնտեղ այդ գործը արդէն թաղված են համարում։ («Рѣчь»)

✦ Օդեսայի գեներալ նահանգապետ Բաուֆալը պահանջել է ներկայացնել իրան բոլոր միջնակարգ և բարձրագոյն տղամարդկանց ու կանանց դպրոցներում սովորողների հայցեները։ («Р. В.»)

✦ Վլադիմիրի նահանգական զեմստվային ժողովը, մանր զեմստվային միութիւն մտցնելու նախագիծը քննելու ժամանակ, որոշել է կանանց ակտիվ իրաւունք վերապահելու հարցը ցանկալի համարել։

✦ Վարշավայում գերմանական եպիսկոպոսն են մտնում «բրաունինգներով» զինված երեք անյայտ մարդիկ, յայտնվում են գերմանական Վիլհելմ II և Ֆրիդրիխ II կայսրերի բիւստերը և, պատուհանից դուրս նետելով բակը, իրանք անյայտանում են։ Բիւստերը կոտրվում են։ Այդ դէպքը, ինչպէս կարծում են, կապ ունի գերմանական կառավարութեան սկսած հակաեկեղեցական այն քաղաքականութեան հետ, որը ցոյց տուեց նա Նորերս Պոզնանում լեհական հողերը գրաւելով։ («Св.»)

✦ Հելսինգֆորսից հեռագրում են «Нов. Время» լրագրին, որ վերջին օրերս Ֆինլանդական սենատում և գեներալ-նահանգապետի մօտ գաղտնի նիստեր են տեղի ունեցել, որին հրաւիրված է եղել մասնակցելու Վերբոգինանահանգապետը նոյնպէս։ Սենատը մշակել է մի ամենահպատակ զեկուցում երկրի իրերի իսկական դրութեան մասին, որտեղ աշխատում են ցոյց տալ Ֆինլանդացիների լոյալ վերաբերմունքը և ռուսական կապածների անհիմն լինելը։ Ինչպէս խօսում են, ինքը Միխայիլը մատղիր է բարձրագոյն ունկնդրութիւն խնդրել։

## ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ահա անցաւ մի ամբողջ տարի այն օրից, երբ կատարվեց Նոր-Նախիջևանի արհեստաւորաց դպրոցում այն կօնցերտը, այն կոմեդիան, երի մասին հա ապիթ էի ունեցել խօսելու «Մշակի» էջերում («Մշակ» 1907 թ. №№ 16 և 18, «Մեր բեֆօրմատորները»)։

Այո, անցաւ ամբողջ տարին. բայց ուր են այն պարոնները, որոնք այնքան իրանց զարմանքն ու զայրոյթը յայտնեցին՝ «տեսնելով» դպրոցի անկեալ վիճակը։ Ո՞ւր են նրանք, որոնք այնքան ճառեցին ու խոստումներ տուին դպրոցը «փրկելու իրանց անկումից» և ինչ են արել նրանք մինչև օրս յօգուտ դպրոցին։

Չէ՞ որ նրանք խոստացել էին դպրոցը հիմնապէս բարեփոխել, «հիմնական ըէֆորմներ» մտցնել և այլն և այլն։ Բայց այդ բոլոր խոստումներից պարոնները գոնէ մէկը կատարե՞լ են։

Դպրոցի մի գոնից մտնել, իսկ միւս գոնից դուրս գալով, զեկուցումներ գրել ու կարդալով քաղաքային դումայում, ճառեր խօսելով և առհասարակ միայն խոստումների շուրջը պտտելով, ինչպէ՞ս էք կարծում, յարգելի պարոններ, գործ կատարած էք զգում ձեզ։

Անցաւ մի ամբողջ տարի, բայց ուր են ձեր խոստացած «ժամանակի հոգաբարձուները», «ժամանակի տեսուչը», «մանանգամ վարպետները» (мастера), ուր է ձեր նիւթապէս ապահովված դպրոցը, որտեղ մատցին և այլ ձեր խոստումները...

Բայց արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ պարոնները ամբողջովին չէին մոռացել դպրոցը։ Նրանք զբաղված էին հրաժարված հոգաբարձուների տեղ նոր հոգաբարձուների ընտրութեամբ. և այդ գործը նրանք «միայն մի տարվայ ընթացքում» կարողացան «աջողութեամբ գլուխ բերել». ընտրված 4 հոգաբարձուներից երկուսը դպրոցի շեմքը չը կոխած՝ հրաժարվեցին։

Բաւական է, պարոններ, «սուտ մեռուկ» ձևանաք։ Այժմ էլ ինչ պատճառներ ունէք առաջ բերելու. մի՞թէ այժմ էլ իրաւունք ունէք ասելու, թէ չէիք իմանում, որ դպրոցը խեղճ վիճակի մէջ է. չէ՞ ձեր «քննութեամբ» ամեն ինչ պարզվեց ձեզ համար։

Ժամանակ է, պարոններ, դպրոցը ազատելու այնպիսի հոգաբարձուներից, որոնք իրանց հոգաբարձու լինելը իմանում են միայն այն ժամանակ, երբ նրանց ներկայացնում են այս կամ այն թուղթը ստորագրելու, և որոնք գալիս են ժողով (իսկ նրանց դպրոց այցելելու մասին աւելորդ է խօսել), երբ ախորժակ են ունենում թէյ խմելու։

Ժամանակ է դպրոցն ազատելու այնպիսի մանկավարժներից, որոնք մանկավարժութեան մասին նոյնքան հասկացողութիւն ունեն, որքան և չինարէնից։

Ժամանակ է դպրոցի վրայից առնել ծանր բեռը՝ մուրալով կերակրել, հագցնել և ուսումնական պիտոյքներ մատակարարել աշակերտներին։

Ժամանակ է, վերջապէս, այս և այլ անհնարաւոր երևոյթները դպրոցի կեանքից վերացնել։

Բայց մի՞թէ այս բոլորը դեռ չէք հասկացել, դպրոցի տէր ու տիրական հանդիսացող՝ քաղաքային դումայում նստող աղաներ։

Թէ՞ դուք սպասում էք մի երկրորդ յարմար առիթի, որպէսզի նորից բեմ դուրս գաք, թափ տալով թեներդ երգէք ձեր кукареку-ն ու հեռանաք, սպասելով մի երրորդ կօնցերտի։

Բայց մինչև ե՞րբ...

Սակայն՝ Ex nihilo nihil! (ոչնչից կարելի է միայն ոչինչ սպասել)։

Նոր-Նախիջևանի արհեստաւորաց դպրոցի նախկին ուսուցիչ՝

Գ. Ճլաուլ

—

Թիֆլիս, 10 դեկտեմբերի

Երբ մեռաւ մեր սիրելի Հայրիկ—վեհափառ կաթողիկոսը, ամբողջ հայ ազգի հետ խոր սուգի մէջ ընկաւ և Թիֆլիսի առաջին քաղաքային դպրոցի 6 դասարանների հայ աշակերտութիւնը։ Նրանք սուրբ պարտք համարեցին իրրև վշտի և յարգանքի արտայայտութիւն պակ դնել Հայրիկի դագաղի վրա։ Սակայն մեր կրօնաւորաց Յովսէփ. քահ. Տէր-Պետրոսեանը նոյեմբ. 1-ին դպրոցում հաւաքելով մեզ բոլոր հայ աշակերտներիս՝ մեր ուշադրութիւնը աւելի կարևոր խնդրի վրա դարձրեց։ Նախ պատմեց Հայրիկի կեանքը, գործունէութիւնը, մեզ ցոյց տուեց նրա մեծութիւնը, մխիթարեց մեզ, յորդորեց լաւ սովորել, աշխատել Հայրիկի արժանաւոր որդիք լինել, յետոյ յայտնեց իր ուրախութիւնը, որ քաղաքային դպրոցի ազգաշաղկերտութիւնը նոյնպէս ցանկանում է մի հատեստ պակով յարգել Հայրիկի յիշատակը։ Միևնոյն ժամանակ տէր-հայրը բացատրելով նիւթական պակների անցողական նշանակութիւնը, զգացրեց մեզ յաւիտենական անթառամ պակների արժէքը և նրանց հասարակական նշանակութիւնն ու օգուտը և առաջարկեց ու յորդորեց, որ մեր ազգատիպ լուսայով հիմք դնենք մի ֆոնդի Հայրիկի յիշատակին, որ կը լինի անթառամ պակ նրա համար, մեծ յոյս յայտնելով, որ մեր ազգաշաղկերտների նախաձեռնութիւնը ֆոնդ կազմելու գործում, բաղկացած թեկուզ մի քանի բուբլիներից, իրրև մանանեխի հատիկ, հայ ժողովրդից այնպիսի ընդունելութիւն կը գտնի, որ կտնի, կը մեծանայ և յաւիտենական յարգանքի կոթող կը դառնայ Հայրիկի յիշատակին։

Աշակերտները մեծ համակրութեամբ և ոգեորութեամբ ընդունեցին տէր-հօր առաջարկը և ընտրեցին մեզ՝ ներքոյ ստորագրողներիս՝ հաւաքել աշակերտներից նուէրներ։

Ո՜րքան մեծ եղաւ աշակերտներիս ուրախութիւնը, երբ հետեւեալ օրն իսկ հայ մամուլը արձագանք տուեց մեր նախաձեռնութեանը, կոչ անելով հայ ժողովրդին միացնել իրանց նուէրները Հայրիկի յիշատակին ձեռնարկված ֆոնդին։ «Նոր-Ալիքը» նոյնիսկ առաջնորդող նուիրեց, սակայն չը գիտենք ինչի համար և ինչ նպատակով մեր «Հայրիկեան ֆոնդը» վերակոչել էր «Վարագայ ֆոնդ»։ Աշակերտներիս համար այդ նոր անունը, թերևս իրրև նոր առաջարկ, անհասկանալի էր։ Մեր կրօնաւորացը թէև մեզ պատմել էր Հայրիկի գործունէութիւնը և Վարագայ վանքում, դպրոց և տպարան բաց անելն այնտեղ, «Արծուի-Վասպուրականի» հրատարակութիւնը Վարագայ բարձունքից, այնուամենայնիւ մենք մեզ հարց էինք տալիս՝ ինչի՞ Վարագայ և ոչ Հայրիկի ֆոնդ. արդեօք Վարագն էր Հայրիկին այն մեծ ժողովրդականութիւնը և «Հայրիկ» ժամանունը տուել թէ՞ Հայրիկով էր Վարագը ժողովրդականութիւն ստացել ու սիրելի դարձել հայ ժողովրդի համար...։

Նկատելի էր որ նոյն տարակուսանքները պատում էին և հայ խաւերի մէջ։ Միայն «Նոր-Ալիքն» ու յետոյ էլ «Լուսակն» էր շարունակ «Վարագայ ֆոնդ» ասում, իսկ «Մշակը» շարունակում էր արծարծել «Հայրիկեան ֆոնդի» գաղափարը, ինչպէս մենք էինք յոյսեր։ Այժմ ուրախ ենք, որ «Վասակը» փարատեց մեր տարակուսանքները, հաշտվելով «Հայրիկեան ֆոնդի» հետ, և նուէրները հաւաքվում են այդ անունով։

Այժմ կասկածից դուրս է, որ «Հայրիկեան ֆոնդը» մեծ աջողութիւն կունենայ։ Իսկ թէ ինչ գործադրութիւն կը ստանայ դա, այդ ապագայի գործն է. միայն հարկաւոր ենք համարում յայտնել, որ աշակերտներիս սկզբնական ցանկութիւնն է եղել, առաջարկութեամբ մեր կրօնաւորացի, վերաբանալ Վարագում Հայրիկի հիմնած, բայց այժմ փակ երկրագործական դպրոցը, եթէ հանգամանքները և «ֆոնդի» միջոցները կը ներեն։

Անհերքելի է, որ պարբերական սովից տառապող Թիւրքահայաստանին կուլտուրական և տնտեսական մեծ դարկ կը տայ մի օրինակելի երկրագործական դպրոց։

Կատարեալ աջողութիւն մաղթելով «Հայրիկեան ֆոնդին» և նրա նպատակայարմար գործադրութեանը, ուղարկում ենք խմբագրութեանդ մեր ազգատիպ լուման (21 ր. 83 կ.) խնդրելով անդադար ազգու կոչ անել հայ ժողովրդի բոլոր խաւերին, որ իրանց առատ նուէրներով քաջալերեն Թիֆլիսի ամենաազգաշատ աշակերտութեան նախաձեռնութիւնը, յանձնելով այդ գումարը Թիւրքական Հայաստանի հայ տառապեալներին նպաստող Հանգանակիչ Մատնաժողովին, որպէսզի սա պահի այդ նպատակով։

Յովհաննէս Ղամբարեան, Մնացականեան Սահակեան, Բախշօ Վարդանեան, Լեոն Լաչինեան։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՍԵՆԿԵՎԻՉԻ ՆԱՄԱԿԸ

«Echo le Paris» լրագրի վերջին համարներից մէկում տպագրված է լեհական հրաչակաւոր վիպասան Սենկեվիչի նամակը, որով նա բուռն զայրոյթով բողոքում է պրուսական կառավարութեան կողմից լեհացիների դէմ սկսված քաղաքական բռնութեան համար։ «Բսանհարիրդ դարը վկայ է մի չը լսված գործի. նա տեսնում է քաղաքակրթութեան, իրաւունքի, արդարութեան և այն մարդասիրական գաղափարների ոտնահարումը, որոնք ժամանակակից հասարակութիւնների կեանքի և կուլտուրայի հիմունքն են դարձել»։

Մատնանշելով պրուսական լեհացիների լոյալ վերաբերմունքը, որ ոչ մի անգամ յեղափոխական փորձեր չեն արել, ճշտութեամբ վճարել են տուրքերը և կատարել իսկական քաղաքացիների բոլոր պարտականութիւնները, Սենկեվիչը ասում է. «Ի պատիւ մարդկութեան, այդ նոր օրինագիծ մասին տարածված լուրը միահամուռ զայրոյթ և բողոքներ առաջացրեց։ Երօպական մամուլը, առանց գոյների և կուսակցութիւնների խտրութեան, գերմանական անկախ մամուլի հետ միասին, դատապարտութեան ենթարկեց պրուսական կառավարութեան այդ ակտը, իբրև անպատուաբեր մի մահափորձ մարդկութեան բնական իրաւունքների ու պրուսական սահմանադրութեան դէմ... Ամբողջ աշխարհը պէտք է ժամանակէ այդ բողոքին։ Դա ամենևին չէ նշանակում միջամտել Հոհենցօլերնների ներքին գործերին, դա մի այնպիսի հարց է, որի մէջ ձայնի իրաւունք ունեն բոլոր քաղաքակիրթ մարդիկ»։

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՕՆԳՐԵՍՈՒՄ (ՇՏՈՒՏԳԱՐՏՈՒՄ)

V *)

Դաշնակցութիւնը առանձին դիմում էր արել բիւրօյին և Թիւրքահայ հատուածի անունով, որպէսզի նրան տրվի ազգային ինքնուրոյն սեկցիա—բիւրօյական ներկայացուցչութիւն։ Դա մի խնդիր էր, որ իսկապէս կախված էր բիւրօյից։ Այդ խնդիրը ևս շօշափվեց օգոստոսի 16-ի նիստում, ուր մենք ներկայ էինք։ Բիւրօն միաձայն մերժեց Թիւրքահայ հատուածին—նրա միջից առաջացած սօցիալիստական (?) կուսակցութեան ազգային ինքնուրոյն սեկցիա տալու առաջարկը։

Այդ հարցի նկատմամբ ևս դաշնակցական «Խարիսխ» և «Արօր» օրգանները թեսեցին կարելի ու անկարելի առասպելներ, որ իբր բիւրօն յետաձգել է մինչև վեց ամիս այդ հարցի ընդունելութիւնը։ Եւ մեր բարեկամ Ժօրէսը յետ մղեց մի արհամարհական ժեստով հայ սօցիալ-դեմօկրատների բողոքը (sic!)—գրում է «Արօրի» մէջ Ego-ի գրիչը։*)

Հերիք կեղծէք իրողութիւնը, հերիք մոլորեցնէք ընթերցող հասարակութեան, ձեր ձեռքին խաղալիք դարձած մասսային։ Դուք օգտվում էք այն հանգամանքից, որ ձեր հակառակորդը՝ հալածված, ստորերկրեայ աշխատանքի ենթարկված, մաժուլից զուրկ, հնարաւորութիւն չունի ամեն ոքի դիմադրելու ձեզ գաղափարային կռուի բոլոր կէտերում, և հասարակ, կօնկրետ իրողութիւններն իսկ կեղծելուց չէք խորշում, ներկայացնելով ամեն բան սխալ ֆոնի վրա, հակառակ ձևի ու բովանդակութեան մէջ։

Ասացէք, պարոններ, մի՞թէ դուք չէք կարդացել բիւրօյի՝ օգոստ. 16-ի նիստի արձանագրութիւնը Շտուտգարտի «Schwäbische Tagwacht», «Vorwärts» (Բերլինում) և կուսակցական այլ թերթերի մէջ, որ լոյս է տեսել յաջորդ օրը. չէ՞ նկատել բիւրօյի կայացրած որոշումը այդ արձանագրութեան մէջ Դաշնակցութեան դիմումի նկատմամբ։ Ինչո՞ւ թաքուն էք տարբերական բարեխղճութեան վրա և հաղորդում էք ձեր թերթերում այնպիսի տեղեկութիւններ, որ մի բառով անգամ նմանութիւն կամ նոյնութիւն չունի նիստի որոշումների արձանագրութեան հետ։ Հայ յեղափ. Դաշնակցութեան կողմից արված առաջարկը՝ Թիւրքահայ հատուածին ազգային ինքնուրոյն սեկցիա տալու համար, «հանդիպեց կենդանի հակասութիւնների, որովհետև այդ կազմակերպութեան (այսինքն Դաշնակ.) սօցիալիստական բնոյթը շատ կողմերից մերժվում էր» (ընդգծումը մերն է)։ Դուք կարդացել էք այդպիսի տողեր արձանագրութեան մէջ, բայց հաղորդում էք ձեր օրգաններում, թէ բիւրօն որոշել է մեր դիմումը ընդունել վեց ամսից յետոյ։

Բացի հայ կազմ. ներկայացուցչից Թիւրքահայ հատուածին վերաբերող առաջարկի մասին խօսեց նաև բուլգարական ազգային սեկցիայի ներկայացուցիչը, իրաւացիօրէն նկատելով, որ ինքը աւելի, քան որևէ մէկը եւրօպական սօց. պատգամաւորներից, շատ լաւ է ճանաչում Թիւրքական պայմանները։ Մի երէկիր, մանաւանդ այդ երկրի Փոքր-Ասիայի բաժինը, ուր գոյութիւն չունեն տեխնիկական ինդուստրիայի հեռաւոր նշաններն անգամ, ուր արդիւնաբերութեան տիրապետող սիստեմը դեռ ագրիկուլտուրային և ձեռնարհեստային է, ուր գոյութիւն չունի ինդուստրիական (մօդերն) պրօլետարիատ, չը կայ բանւորական նոյնիսկ տարերային շարժում տնտեսական հողի վրա, մի խօսքով մի երկիր, ուր կատարելապէս բացակայում են սօցիալիստական շարժման ու գործունէութեան բոլոր օրենքները։ Ինչպէս ասաց նա, ինքնուրոյն սեկցիա տալիս նախապայմանները, մի այդպիսի երկրում,—ինքներդ դատեցէք ընթերցող, եթէ դուք գաղափար ունէք սօցիալիզմի գէթ այբուբէնից,—կարող է իսկական սօցիալիստական շարժման, սօցիալիստական կուսակցութեան մասին հեռաւորապէս անգամ խօսք լինել։ Թող այդ սօցիալիզմը չը լինի պրոլետարական-գիտական սօցիալիզմը, այլ նոյնիսկ ս.-դ.-ների մանր-բուրժուական-ուտոպիական սօցիալիզմը։ Մի ճնշված, տառապող ժողովրդի, ասել է՝ ողջ Թիւրքահայ ազգաբնակութեան ազատագրական շարժումն ու խնդիրը յայտարարել սօցիալիստական—դա մտքի մի այլանդակ վիժուածք է, մի կոպիտ բանաքրօսիկութիւն (որի վրա, մենք աւելի քան հատուցած ենք, ծիծաղում է այսօր փոքր ի շատէ լրջմիտ ու հետևողական դաշնակցական), մի ֆիկցիա է առաջին կարգի։ Ահա ժամանակաբացառական վերաբերմունքի մի կողմը, որի վրա ծանրացան բիւրօյի ժողովականներից ոմանք։

Մերժման միւս կողմը սատատուային հարցն էր (բիւրօյի կանոնադրութիւնը), որ յարուցել էր հէնց ինքը՝ Դաշնակցութեան «բարեկամ» ժօրէսը։

Բանը նրանումն է, ինչպէս մենք շեշտեցինք, որ ազգային բառը պետական գաղափարի իմաստ ունի և ամեն մի ազգային սեկցիա բիւրօյում ներկայացուցիչ է մի ուրոյն պետութիւնից, քաղաքական տերիտորիայից. միակ բացառութիւնը, իբրև հին ինտերնացիոնալից մնացած տարաձիգիա, կազմում են լեհերը, որոնք ունեն բիւրօյում ինքնուրոյն ազգային սեկցիա, թէև զուրկ են ազգային պետութիւնից։

Այդ կանոնադրական կէտը գործադրվել է և գործադրվում է բիւրօյի կողմից որպէս սկզբունք։ Թիւրքիան չունի սօցիալիստական ներկայացուցչութիւն մի՞ջազ. սօց. բիւրօյում։ Եթէ բիւրօն ընդունէր Թիւրքահայ հատուածի կողմից ազգային ուրոյն սեկցիա բիւրօյի մէջ, դրանով նա խախտած կը լինէր ընդունելութեան իր կանոնադրական սկզբունքը, որովհետև հպատակ Թիւրքահայութիւնը ներկայացուցիչ չէ ուրոյն պետական մարմնի, քաղաքական տերիտորիայի։ Հէնց այդ հիման վրա էլ բիւրօն առանց տատանվելու մերժեց Դաշնակցութեան դիմումը։

Արդեօք ապագայում, մինչև յաջորդ սօցիալիստական կօնգրեսը (1910 թ. Կոպենհագենում), բիւրօն կընդունէ՞ Դաշնակցութեան դիմումը, դա ապագայի հարց է, այն ևս վիճելի հարց, և իբրև այդպիսին, թողնենք ապագային։

Մեզ համար կարևոր ու հետաքրքրական էր միայն իմանալ նորագոյն անցեալի մերկ իրողութիւնը։ Եւ մեր թաց փատերն ու լրացուցիչ բացատրութիւնները եկան լոյս սփռելու այդ թագցրած իրողութեան վրա, քերելու նրա վրայից միտումաւոր քաղաքականութեամբ յերիւրած կեղծիքը և հրապարակ հանելու նրան իր բոլոր յատկութեամբ։

Հայկական իրականութիւնը, ըստ երևոյթին, փոքր էր Դաշնակցութեան մոլորեցուցիչ արհեստի գործադրութեան համար, ուստի նա փորձեց ծաւալել իր արհեստի գործադրութիւնը և միջազգային արիօպագում։

Satis suprague!
Est modus in rebus!

Bolt.

## ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Թաւրիզ, 12 դեկտեմբերի

Երեք օր առաջ լուր տարածվեց, որ Թէհրանի «մէջլիս»-ը պաշարված է կառավարութեան զինուորներով։ Այս լուրը առնելուն պէս հասարակութիւնը հաւաքվեց հեռագրատուն։ Երկար խորհրդակցութիւնից յետոյ ժողովուրդը եկաւ այն համոզման, որ շահի հակասահմանադրական վարմունքը դրժումն է իր ս. գրքի վրա արած երդման. այդպիսի երդմնադրուժին այլ ևս չէ կարելի շամանուելման համարել, և քանի որ ըստ «կանոնը-էսասի»-ի Պարսկաստանի շահերը շամանդեղականներ պիտի լինեն, հետևաբար Մամմադ-Ալի շահին համարելով ոչ մահմեդական, համարել միամամանակ և ոչ շահ Պարսկաստանի։ Այսպիսի իմաստով հեռագիրներ ուղարկվեց Թէհրան դեսպանութիւններին և յայտարարվեց տեղիս հիւպատոսներին։ Երէկ բոլոր բանտարկվածներին մի սէիդ արձակել տուեց։ Այսօր անջուծանի կարգադրութեամբ՝ արձակվածներին կրկին սկսեցին բանտարկել։ բայց յայտնի յանցաւորները վազուց էին գծիկը դրել։ Կառավարչապետի քիւրդերի դէմ կռիւ գնալը ամբոխի կողմից համարվում է շինծու։ Ենթադրում են, որ այդ պատրուակով նա ուզեց տեղիս զինանոցի զէնքերը և թնդանօթները քաղաքից դուրս բերել, որպէսզի եթէ Թէհրան յանթութիւնը միապետականների կամ շահի կողմը թեքվէ, ինքն էլ անմիջապէս քաղաքի վրա յարձակվէ և «անջուման»-ը ցրվէ։ Այս ենթադրութիւնները չիրականացան։ Թէհրանից «մէջլիս»-ից ստացված հեռագրով յայտնվում է, որ շահի և մէջլիսի միջև ընդհարում տեղի ունեցել է, բայց թէ ինչ չափեր է ընդունել, յայտնի չէ։ «Մէջլիսից» տեղիս «անջուման»-ը խիստ յանդիմանութիւն է ստացել շահի գահընկեցութեան առիթով եղած յայտարարութիւնների մասին։ Անիշխանութիւնը վայրկեան առ վայրկեան ծայրայեղութեան գագաթնակետի պատրաստվում է։

*) Տես «Մշակ» № 188.

*) Ego-ն այնպիսի ապօրինով է գրում իր տողերը, որ կարծես ինքը ներկայ է եղել այդ նիստին և անձամբ լսել է Ժօրէսի ասածները։ Մինչդեռ նա իր ընկերների հետ սպասում էր դուրսը սրատարփ, չմտնելով, որ Ժօրէս և թէ ուրիշներ ջուրն են նետել իրանց միտումաւոր յայտերն ու ակնկալութիւնները։

կէսն է շտապում։ Երկկ ռուսաց պօստը, Որմիից գալիս, կողոպտվեց և սուրհանդակը ծանր վիրաւորվեց աւազակներից։ Անհնար է գրչով Պարսկաստանի ներկայ կացութիւնը պատկերացնել։ Այսքանը կարելի է ասել, որ եթէ ներկայ անիշխանութեան հեռանկարն, իսկ գոյութիւն ունենար մի որեէ եւրոպական պետութեան մէջ, կողոպտումը և արիւնհեղութիւնը չափ ու սահման չէին ունենայ։ Պատճառները, պարզ է, չէ կարելի որոնել ժողովրդի իմացականութեան մէջ։ Ո՞վ գիտէ, գուցէ դեռ համբերութեան բաժակը լցված չէ, որից յետո կարող է փոթորկալից ալիկոծութիւնը բոլորովին անսպասելի իրականութեան առաջ կանգնեցնել մեզ։ Փաստը այն է, որ անորոշութիւնների, անակնկալների ուղիով ենք առաջ գնում։ Դժուար թէ Պարսկաստանը կարողանայ ինքն իրան խաղաղվել և կեանքը իր սովորական ուղիով առաջ գնայ։ Ինչպէս մի անգամ էլ ասել ենք, ոչ պետութիւնը այժ ունի շարժումները ճնշելու և ոչ էլ «մէջլիսը» կարող է բարենորոգել երկրի կարգերը և խաղաղեցնել։ Որքան էլ մենք ուզում ենք լաւատես լինել, այսուհանդերձ իրերի դրութիւնը սոսկալի, հարկադրում է մեզ լաւ բան չը սպասել ներկայ շարժումներից։ Պարսկական շարժումները կամ սահմանադրութիւնը կրիլովի սայլն վիճակումն են գտնվում։ տարբերութիւնն այն է, որ նրա տարբեր ուղղութեամբ ձգողներ-քաշողները երեք էին, իսկ պարսկական սահմանադրութեանը հարիւրերեք։ Ռուսաց պօստի կողոպտվելը, ինչպէս յայտնվում է, քաղաքական նպատակով է եղել, խմանալու համար թէ ինչ մտքեր են փոխանակվում հիւպատոսութիւնների և պետութեան միջև (ռուսական)։ Եթէ իրերի ընթացքը շուտով փոփոխութեան չենթարկվի, անպայման դատարկ պետութիւնների միջամտութեան խընդիրը պիտի հրապարակ գայ։ Ժողովրդի մեծամասնութիւնը զզուած է տիրող անկարգութիւնից։ կան նոյն իսկ մտածողներ, որ մի քանի օտարահպատակ յայտնի մարդկանց սպանել տան, որպէսզի միջամտութեան խնդիր առաջ գայ և իրանք ազատվեն ներկայ երկրուն և երկբայելի կացութիւնից։ Այդեօք միջամտութիւնը միջոց է իրերի դրութեան բարեփոխման... Արդեօք միջամտութիւնը աշխարհաւեր բարդութիւններ չը պիտի՞ առաջ բերէ միջազգային «բարայում»։ Արդեօք քրիստոնեայ դիպլոմատները կրկին թակարդներ չեն ուզում լարել՝ արեան գետեր հոսեցնելու, մայրեր լացացնելու համար... Ասում են, որ դիպլոմատների սրտերը սովորական մարդկանց սրտերից չեն... Ես նոյն իսկ կասկածում եմ, որ սիրտ անգամ գոյութիւն ունենայ նրանց կրծքի տախտակների տակ տրոփող... Ահա թէ ինչ խորհրդածութիւններ են կատեցնում Հիւսիսային Արծուի սառամուտը։

II

*Թաւրիզ, 13 դեկտեմբերի*

Ի նկատի ունենալով երկրի խառնակ դրութիւնը, թեմակալ առաջնորդը Դարեգին քահանային ուղարկեց Մարաղայի, Միանդաբի, Սօվուջ-Բուլաղի և Սուլդուզ գաւառակների շրջանները պտոյտ անելու, այդ կողմերում գտնվող հայերի դրութիւնը առաջնորդարանին հաղորդագրելու համար, որպէսզի հաստատուն տեղեկութիւնների վրա հիմնվելով առաջնորդարանը կարողանայ հարկ եղածը տնօրինել և պէտք եղած դիմումներն անել ուր կամ ում որ կարելի է։ Ինչպէս լսում ենք, Միանդաբի հայերը իրանց ընտանիքները փոխադրել են Մարաղա քիւրդական արշաւանքից և վայրագութիւններից զերծ պահելու համար, որովհետև 1881 թուականին շէյխ Իբադուլլայի հրդեհները նոյն քաղաքում բաւական հայեր ջարդեցին։

Ծարման-Ծարման գտնվում է քաղաքիցս միօրեայ հեռաւորութեամբ մի գիւղում։ Անցեալ նամակով յիշածս մի քանի հարիւր ֆիւայիները չը գնացին կռուի, քաղաքի շրջակայքից վերադարձան։ Խօսվում է, որ Սօհրուլաղը տիրապետող քիւրդերի մէջ էլ պառակտումն է ընկել։ Թէ ինչ են մտադիր անել քիւրդերը, թէ ինչ պիտի անի պարսից կառավարութիւնը, ոչինչ չի կարելի նախատեսել։

Անհերևակայելի անիշխանութիւն է. աւելի ճիշտ կը լինի ասել՝ «իշխանները» անթիւ են։ Ամենքն առաջ Մաքուայում ապանվեց մի թուրք պատանի, դիակը գտնվեց մի հայի վարձած այգում։ հայը կասկածվեց սպանութեան մէջ և ամիսներ էր որ գեղերում էր այստեղի բանտում։ Երեք օր առաջ գիշերը ժամը 12-ին երկու լօթիներ (ոչի) գալիս և բանտից հանում, տանում են։ Ինչպէս լսում ենք, սպանած պիտի լինեն։ սպանութիւնն էլ հետևում կերպով է պատմվում։ որովհետև բանտարկեալը պատանի էր և գեղեցկադէմ, երկու լօթիների մէջ վեճ է բռնկում տիրելու համար... ատիպված են լինում կռուածաղիկը ժէջտեղից վերցնել։

Գիշերս երկու հայք, ժամը 10—11-ին, կողոպտել և վիրաւորել են Թուսաց ռուբհանդակը, որ վիրաւորված էր, մեռաւ Հինդ օր առաջ Արաքեան դպրոցի երկրորդ դասարանի մի 14 տարեկան աշակերտ անձնասպանութիւն գործեց Մարտինի հրացանով իր ուղեղը ցրելով։ Պատճառը վերագրվում է տղայի եղբօր կնոջ դէպ անձնասպանը ունեցած կապիտ վարմունքը։ Նմանօրինակ դէպքերի առաջն առնելու համար, լաւ կը լինէր յատուկ քննութիւն լինէր այդ մասին առաջնորդարանում և հայր թեմակալը խրատական քարոզներով զգուշութիւն հրաւիրէր մեր ընտանիքներին, որոնք մեծ պէտք ունեն իսկական դաստիարակութեան։

«Ռուսաց հիւպատոսի վերաբերմամբ սուտ լուրեր հրատարակող «Անջուման» թերթը հերքելով իր գրածները հիւպատոսի մասին՝ կրկին սկսեց հրատարակվել։ Յեղափոխականների «Մուջահիդ» թերթի խմբագրին «անջուման»-ում ծեծի ենթարկեցին իր հակակղերական յօդուածի համար։

Ամեն օր փողոցներով և շուկաներով զինված կամաւորների խմբեր են անցնում. թէ ինչու են պատում փողոցները, իրանք էլ չը գիտեն։ Երբեմն ասում են՝ թէ Էրան պիտի գնանք «մէջլիսի» օգնութեան։ Երևակայեցէք, ներկայումս պետութեան կամ անջումանի կողմից մի հատիկ մարդ չը կայ սահմանագծերի վրա ճիշտ տեղեկութիւններ հաղորդելու համար. երբեմն այնպիսի ստեր և առասպելներ ենք լսում, որ շատ անգամ չենք վստահանում շատ ու քիչ վստահելի լուրերն էլ տրագրութեան տալ։ Իսկական ճշգրիտ լուրեր սպասվում են շրջիկ հովիւ տէր-Գարեգինից, որոնց առաջնորդարանից տեղեկանալով կը հաղորդեմ։ Ներկայ խառնակ հանգամանքներում Ցեմակալի տեղս լինելը մի բարիք կարելի է համարել, նամանաւանդ գաւառակներում, խուլ անկիւններում գտնվող բազմաչարչար, մոռացված հայ փշրանքների համար։ Աստրպատականի հայութեան միակ յոյսը և ապաւէնը ինչպէս միշտ՝ կա՛ս առաւել ներկայումս առաջնորդական աթոռն է։

*Իրօ*

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Նոր միհիսr-նախագահը.—«Times» լրագիրը իր առաջնորդողում հետևեալ բնորոշումն է տալիս Պարսկաստանի ներկայ մինիստր-նախագահ Նիզամ-էս-Սալթանէի բընաւորութեան հետաքրքիր գծերի մասին.

«Ծագումով քիւրդ լինելով, Նիզամ-էս-Սալթանէն առաջ է եկել պարսկական հասարակութեան ամենացածր խաւերից։ Նա իր համար դիրք է ստեղծել Պարսկաստանում ընդունված սովորական միջոցների օգնութեամբ։ Իր համախոհների շրջանում նա սկզբունքից բոլորովին զուրկ մարդու համբաւ է վայելում և իր երկարատև պաշտօնավարութեան ամբողջ ժամանակամիջոցում, որը, ի միջի այլոց, իրան հնարաւորութիւն է տուել բաւականին մեծ հարստութիւն հաւաքել,—նա շատ փոթորիկների է ենթարկվել։ Մի քանի տարի առաջ, երբ նա Պարսկական Արաբստանի գեներալ նահանգապետն էր, նրա կամայական գործողութիւնները տուին տուեցին անգլիական դեսպանութեանը բուռն կերպով բողոքելու նրա դէմ, և պարսից կառավարութիւնը ստիպված եղաւ հանդիսաւոր խոստումներ տալ այլևս չօգտվելու Նիզամ-էս-Սալթանէի ծառայութիւններից մերձակայ հինգ տարիների ընթացքում։ Կարճ ժամանակից յետոյ, այնուամենայնիւ, շահը այդ խոստումը բացատրեց այլ կերպ, այն մտքով, որ նա, իբր թէ, խոստացել է գեներալ-նահանգապետի պաշտօն միայն չը տալ Նիզամ-էս-Սալթանէին, բայց ոչ կենտրոնական ադմինիստրատորի պաշտօն։ Իր կամայականութիւններով հռչակված այդ պաշտօնեան հրաւիրվում է մայրաքաղաք և նշանակվում առևտրի մինիստր։ Նիզամ-էս-Սալթանէին առաջին մինիստր նշանակելը և նրա հետ միասին շահի ընտանիքի անդամներից մէկին զինուորական մինիստրի պաշտօնավարութեան կանչելը պէտք է համարվի ռեակցիոն կուսակցութեան համար աջողութեան մեծ նշան։ Զարմացնում է միայն մի բան. ինչպէ՞ս է պատահել, որ նոր կաբինետի կազմի մէջ մտել են 4 մինիստրներ, որոնք առաջ գտնվում էին հին սահմանադրական կաբինետի մէջ։ Գուցէ այդ նշան է, որ շահը դեռևս բացարձակ կերպով չէ ուզում խզել իր յարաբերութիւնները, գուցէ, ժողովրդական ներկայացուցչութեան գաղափարի հետ։ Ըստ երևոյթին, երբ coup d'etat-ն չաջողվեց, շահը աշխատում է ատոհանարար այնպէս անել, որ արտաքուստ պահպանվէր սահմանադրութիւնը, իսկ իրապէս նա, շահը, կարողանայ վարվել այնպէս, ինչպէս ինքն է ուզում»։

## ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

«Кавказъ»-ի սեփական թղթակիցը Պետերբուրգից հաղորդում է հետևեալ նորութիւնները։

Ռուսաց սինոդի դիւանատան քարտուղար Լէվիցկին նշանակվում է վրաց սինոդալի գրասենեակի դատախազ։

Կայսերական գնացքների տեսուչ հօֆմէյստէր Կոպիտկինը, լուրերին նայած, նշանակվում է ճանապարհների հաղորդակցութեան մինիստր։

Երկաթուղային գլխաւոր տեսուչ Գօրչակովը Օրէնբուրգ-Տաշքենդ երկաթուղագծում երևան է հանել 2 միլիոնի վատնում, որ կատարել են բարձրաստիճան ծառայողները։ Նրանցից մի քանիսին պաշտօնազուրկ են արել։

Սպասվում է ֆինանսների մինիստրութեան նոր հրահանգը, որի համաձայն ամենուրեք արգելվելու է օղի վաճառել պետական գինու պահեստներից կիրակի օրերը և двунадесятый կոչված տօներին։

Գալիք տարվայ յունվարի 22-ին Ցարսկոյէ Սելօյում նշանակված է Պետական Դումայի 250 անդամների ընդունելութիւն։

ՔԻՇԻՆԷՎ։ Օրգիէվսկի գաւառի Դերբէնտ գիւղում, տուրքերը ժողովելու ժամանակ, տեղի ունեցաւ արիւնահեղ ընդհարում պահակների և գիւղացիների միջև։ Կան սպանվածներ և վիրաւորվածներ։ Քննութիւն կատարելու համար ուղարկված է նահանգական վարչութեան անդամներից մէկը։ Ուղարկված են նաև զրադունների և հեծեալ պահակներ։

ՀՌՕՄ։ Բօրսայի շինութեան մէջ, որ լի էր հասարակութեամբ, կէսօրից յետոյ տեղի ունեցաւ ուժեղ պայթում, որի ժամանակ 18 հոգի ծանր վիրաւորվեցին։ Ամբողջ դահլիճը քանդվեց։

ՊԱՐԻԶ։ Սենատի նիստում յանկարծամահ եղաւ արդարադատութեան մինիստր Գիւիս Դեսենը։

ՖԼՕՐԷՆՑԻԱ։ Ուժեղ երկրաշարժ տեղի ունեցաւ առաւօտեան ժամը 6 և 30 րոպէին և 9 ժամ 45 րոպէին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՑԺ Ե. Կ. ԽՕՌՆԵՎԱ—9½—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Հաւատարմագրերը՝ ներ։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԳ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ
ԶՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ
ԲԱԳՈՒ (Գանձակ, Եւլախ)
Արագ—գիշ. 12 ժ. 28 ր., Գանձակ—գիշ. 5 ժ. 42 ր., Եւլախ—առաւ. 7 ժ. 19 ր., Բագու—ցեր. 2 ժ. 43 ր.։ Պօստ.—երեկ. 9 ժ. 41 ր., Գանձակ—գիշ. 4 ժ. 13 ր., Եւլախ—առ. 6 ժ. 27 ր., Բագու—ցեր. 5 ժ. 39 ր.։ Մարդատար—ցեր. 7 ժ 53. ր., Գանձակ—ցեր. 2 ժ. 10 ր., Եւլախ—ցեր. 4 ժ. 21 ր., Բագու—գիշ. 1 ժ. 50 ր.։
ԲԱԹՈՒՄ (Գօրի, Միխայլօվո, Ռիօն)
Մարդատար (№ 7).—առ. 10 ժ. 58 ր., Գօրի—ցեր. 1 ժ. 30 ր., Միխայլօվո—ցեր. 2 ժ. 58 ր., Ռիօն—երեկ. 7 ժ. 21 ր., Բաթում—գիշ. 12 ժ. 10 ր.։ Պօստ.—առ. 9 ժ. 15 ր., Գօրի—ցեր. 11 ժ. 49 ր., Միխայլօվո—ցեր. 1 ժ. 19 ր., Ռիօն—երեկ. 5 ժ. 47 ր., Բաթում—գիշ. 10 ժ. 45 ր.։ Մարդատար (№ 5)—գիշ. 11 ժ. 22 ր., Գօրի—գիշ. 1 ժ. 57 ր., Միխայլօվո—գիշ. 3 ժ. 20 ր., Ռիօն—առ. 7 ժ. 41 ր., Բաթում—ցեր. 12 ժ. 27 ր.։
ԵՐԵՒԱՆ (Ալէքսանդրօպոլ)
Ապր.-մարդ.—ցեր. 3 ժ. 16 ր., Ալէքսանդրօպոլ—գիշ. 2 ժ. 30 ր., Երևան-Ուլուխ. առ. 8 ժ. 22 ր.։ Պօստ.—գիշ. 1 ժ. 8 ր., Ալէքսանդրօպոլ—ցեր. 11 ժ. 53 ր., Երևան—Ուլուխ.—ցեր. 5 ժ. 35 ր., Նախիջևան—գիշ. 12 ժ. 32 ր., Ջուլֆա—գիշ. 2 ժ. 35 ր.։
ԲԱԳՈՒԻՑ (Պետերբուրգի ժամանակով)
Մարդատար—առ. 4 ժ. արագ.—ցեր. 4 ժ. 4 ր.։ Պօստ.—ցեր. 11 ժ. 23 ր.։
ԲԱԹՈՒՄԻՑ—Մարդ.—առ. 10 ժ. 38 ր.։ Պօստ.—առ. 6 ժ. 49 ր.։ Մարդատ.—ցեր. 5 ժ. 46 ր.։
ԵՐԵՒԱՆ-ՈՒԼՈՒԽԱՆԼՈՒԻՑ — Պօստ. — առ. 1 ժ. 58 ր.։ Ապրանք.-մարդատար—գիշ. 1 ժ. 50 ր.։
ՋՈՒԼՖԱՅԻՑ—Պօստ. գիշ. 4 ժամին։ Մարդ.-ապրանք.—ցեր. 3 ժ. 21 ր.։
ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ — Պօստ. — 7 ժամին։ Մրդ.-ապրանք.—6 ժ. 58 ր.։

ՄԵՂՐ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆԻ մեղուանոցից
ծախվում է պուղերով
Գուղը 9 բուբլի։ Գալ առ. ժ. 11—2. Հասցէն Բեթղեհէմի վերելք, տ. Սիմէոնեանցի № 3, կուսանաց վանքի մօտ. վերին յարկ։ 3—5

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
(Զեռնարկ ժայրերի և դաստիարակչուհիների համար)
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿԻ
Գինն է 1 ր. 50 կ.
Մ՝թքայէլեան փողոց № 138
10—20

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլոլակ, Բեհբութեան փողոց № 33։
(ա. օ.) 69—160

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։
Միքայէլեան փողոց, № 27։
(Ե. Հ. շ. կ.) 42—50

ԲԺԻՇԿ
Ա. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն | 10—12 առաւօտ. 6—7 երեկ.
Բաթիշչեվսկի փող. № 22.
(ամ. օ.) 10—9

ԲԺԻՇԿ
Գ. ՄԱՂԱՔԵԱՆ
Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր | 12—1 ժ. առաւօտեան 5—7 ժ. երեկոյեան
Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 69—100



ՆՈՐ ԳԻՒՏ
„ԲՕՐՆՕ ՆԱՖԹԱԼԱՆ"
Բոլորովին փչացնում է գլխի թիվը, պիրքացնում մազերը, նպաստում է նրա բուսնելուն և տալիս է նրան իսկական տեսք։
Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, որպէս չը պարունակող ոչ մի վնասակար նիւթ։
Վաճառվում է՝ Кавказское Т-во торгов. аптек. товарами; Офицерское Экономическое общество и въ ихъ отдѣленеіяхъ. դեղատներում, դեղավաճառների և հոտաւէտեղէն ծախողների մօտ։
(7,22) 12—25

Открыта подписка на 1908 годъ.
III-й годъ изд. ВѢСТНИКЪ НАРОДНОЙ СВОБОДЫ. III-й годъ изд.
ЕЖЕНЕДѢЛЬНИКЪ К.-Д
Еженедѣльникъ издается въ С.-Петербургѣ при ближайшемъ участіи В. Д. Набокова и А. И. Каминка, по прежней программѣ и съ тѣмъ же составомъ.
ПОДПИСНАЯ ЦѢНА
СЪ ДОСТАВКОЙ И ПЕРЕСЫЛКОЙ:
на годъ 5 руб., на полгода 3 р.
Разсрочка: при подпискѣ 3 р. и къ 1 мая 2 р.
За границу вдвое. ОТДѢЛЬНЫЕ №№ продаются въ книжныхъ магазинахъ Вольфа, „Дума", Карбасникова, Мелье, Митюрникова, Попова и „Право" и въ кіоскахъ Пташникова по 15 к. Перемѣна адреса 20 коп.
Подписка принимается: 1) въ С.-Петербургѣ: въ конторѣ журнала—Кирочная, № 30, отдѣленіе конторы для городскихъ подписчиковъ при конторѣ газеты „Рѣчь", Невскій пр., № 13 (въ книжн. маг. Вольфа); 2) въ Москвѣ: при книжномъ складѣ „Народное Право", Б. Никитская, Чернышевскій пер., домъ Пустошкина, кв. 26; 3) въ комитетахъ конституціонно-демократической партіи. Пробный № высылается главной конторой за одну 7 коп. марку. Адресъ редакціи и главной конторы: Спб., Кирочная, 30, кв. 34.
Издатель: В. Д. Набоковъ. 1—3 Редакторъ: А. Ю. Блохъ.

ՅԱՌԱՋԻԿԱՅ 1908 Թ. ՍԿԶԲԻՑ
Թիֆլիսում կը հրատարակվի
ԳԵՂԱՐՎԵՍՏ
ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
Պատկերազարդ հանդէս
(Ամսագիր)
ԾՐԱԳԻՐԸ
Ա. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՏԵՍԱԿԱՆԸ.—Գեղեցիկ փիլիսոփայութիւնը (էստետիկա)։ Գեղարուեստների մասին առանձնապէս՝ ա) բանաստեղծութիւն, բ) երաժշտութիւն, գ) թատրոն, դ) նկարչութիւն, ե) քանդակագործութիւն, զ) ճարտարապետութիւն։
Բ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ.—ա) Գեղարուեստը հայոց մէջ, բ) հարևան ազգեր, գ) գեղարուեստը մօտիկ արևելքում, դ) գեղարուեստը արևմուտքում, ե) նշանաւոր արուեստագէտների կեանքն ու գործունէութիւնը։
Գ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԳՐԱԿԱՆԸ.—Նորագոյն հայ գեղարուեստական գրականութիւնից ընտիր երկասիրութիւններ՝ ա) վէպեր, վիպակներ, պատմուածքներ, բ) թատրոնական գրուածքներ, գ) արձակ և տաղաչափական բանաստեղծութիւններ։
Դ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՒ ԴՊՐՈՑՈՒՄ.—Մանկավարժական յօդուածներ։
Ե. ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ-ՔՆՆԱԿԱՆ.—ա) Գրախօսութիւն գեղարուեստական երկերի, բ) բեցենզիա կովկասեան բեմի և հայոց թատրոնի, գ) գեղարուեստական ցուցահանդէսներ։
Զ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ.—ա) Թղթակցութիւններ հայ արուեստին վերաբերեալ, բ) գեղարուեստը ռուս մայրաքաղաքներում, գ) արտասահմանեան նամակներ, դ) գեղարուեստական քրոնիկ—նորութիւններ գեղարուեստի աշխարհից։
Է. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ա) Եկեղեցական երաժշտութիւն, բ) աշխարհիկ երաժշտութիւն, գ) ժողովրդական-ռազմական երգեր և պարերգանվներ։
Ը. ՊԱՏԿԵՐԱԶԱՆԴԷՍ.—ա) Օրիգինալ նկարներ և պատկերներ, բ) նժուշներ նշանաւոր արուեստագէտների ստեղծագործութիւններից, գ) գեղարուեստի փառքը (առանձին թերթերով), դ) իլլիւստրացիա, օրնամենտ, մանրանկար, զարդանկար։
Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.—ա) Մեր ասելիքը, բ) պօստարկղ։
Ժ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—Բացառապէս գեղարուեստին և գրականութեան վերաբերեալ։
«Գեղարուեստի» դիրքը լինելու է ժեմդիր, քառածալ (in quarto), նման եւրոպական գեղարուեստական առաջնակարգ հանդէսներին. ծալքը՝ իւրաքանչիւր գիրքը 100 երես երկէջեան. առանձին եղող նկարները գունաւոր. կլիշեները պատրաստվում են Լայպցիգում և Պետերբուրգում. բուղրը ընտիր տեսակի, տպագրութիւնը կարելւոյն չափ ինքնամքով և շքեղ։
Աշխատակիցների անպայման վարձատրութիւն
Տարեկան բաժանորդագրութիւնը 10 բուբլի
Արտասահմանի բաժանորդների համար 30 ֆրանկ
Կարելի է վճարել մաս-մաս. իւրաքանչիւր գիրքը հատավաճառ 1 ր. 50 կ.
Հասցէներ՝
Յօդուածների, նամակների և այլ գրութիւնների համար՝ Գ. Լեոնեանին, Бебутовская № 12. Բաժանորդագրութեան, յայտարարութիւնների և այլ գրամական-գրասենեկային գործերի համար՝ Գ. Գալստեանին «Գուտենբերգ» գրավաճառանոցում և Ն. Մատինեանին «Փառաս» գրախանութում։ Օտար քաղաքներից՝ Тифлисъ, Редакція „Гехарвестъ".
Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ
(2·) 5—5

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мкртчіановъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.